

ԴԱՍԿԱՆԱԼՈՎ ԵՐԵՒԱՅԻՍ





«Հասկանալով երեխայիս» ձեռնարկը նախատեսված է ծնողների և ընտանիքի անդամների համար՝ հասկանալու և ընդունելու երեխաներին, եթե նրանք լեսբի, գեյ, բիսեքսուալ կամ տրանսգենդեր են, կամ եթե ընտանիքն ունի նման ենթադրություն և իր զավակի սեռականության վերաբերյալ: Ձեռնարկը կարող է նաև ինֆորմացիայի աղբյուր հանդիսանալ այն մարդկանց համար, ովքեր ցանկանում են տեղեկատվություն ստանալ նման հարցերի շուրջ: Ձեռնարկի մշակման գործում ներգրավվել են սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, իրավապաշտպաններ և LQFS անձանց ծնողներ: Ձեռնարկի համար ոգեշնչման աղբյուր է հանդիսացել մոլդովական GENDERDOC-M կազմակերպության կողմից հրատարակված «Մեր LQFS երեխաները» գրքուկը:





ՆԱԽԱԲԱՆ

Դուք հավանաբար լսել կամ ճանաչում եք մարդկանց, որոնք կարող են սիրահարվել նույն սեռի անձանց՝ լեքբի, գեյ, բիսեքսուալ (ԼԳԲ), կամ մարդկանց, որոնք իրենց նույնականացնում են այլ գենդերի հետ՝ տրանս (Տ): Ես էլ էի լսել, սակայն ինձ համար դժվար էր պատկերացնել, որ իմ ընտանիքի անդամներից որևէ մեկը կարող է լինել նույնասեռական: Այնուամենայնիվ, դա հնարավոր է, քանի որ իմ և ձեր ընտանիքները բացառություն չեն, և, իհարկե, մենք միակը չենք:

ԼԳԲՏ անձինք դեռ վաղ տարիքից կամ կյանքի այլ փուլերում սկսում են զգալ, որ որոշ հատկանիշներով տարբերվում են մյուսներից: Հասարակության ճնշման ներքո ԼԳԲՏ անձինք երբեմն ստիպված են լինում հետերոսեքսուալ հարաբերություններ ունենալ, որոնք, ինչպես փորձն է ցույց տալիս, դարձնում են թե՛ իրենց և թե՛ իրենց ընտանիքի անդամներին ավելի դժբախտ: Շատ տրանս անձինք ստիպված են լինում թաքցնել իրենց իրական գենդերային ինքնությունը, որն էլ հանգեցնում է հոգեբանական և զգացմունքային խնդիրների:

Սույն գրքույկը ձեզ կօգնի գտնել ձեզ համար անհասկանալի հարցերի պատասխանները

- Ինչու՞ է իմ երեխան այդպիսին, ի՞նչ պետք է անենք հիմա:
- Ո՞վ է դառնալու երեխաս ապագայում:
- Արդյոք իմ երեխան երջանիկ կլինի՞:
- Միգուցե դա անցողի՞կ է:
- Միգուցե ինչ-որ մեկը համոզե՞լ է նրան այդպիսին դառնալ, և դեռ հնարավոր է փոխե՞լ ամեն ինչ:
- Ո՞րն է իմ մեղքը:



- Ինչպե՞ս են ապրում LQFS անձինք:
- Ի՞նչ կասեն հարազատները, հարևանները, շրջապատը, և այլ հարցեր:

Նման հարցեր առաջացել են ինձ մոտ և թերևս կառաջանան այն ծնողների մոտ, որոնք հասկանում են, որ իրենց զավակը լեսբի, գեյ կամ բիսեքսուալ է, կամ երեխայի գենդերային ինքնութունը չի համընկնում կենսաբանական սեռի հետ: Միգուցե հիմա ձեզ անելանելի վիճակում եք զգում, չգիտեք՝ ուր դիմեք, կամ՝ որ մասնագետը կօգնի ձեզ: Եկեք միասին փորձենք հասկանալ այս ամենը, գտնել այն հարցերի պատասխանները, որոնք վերաբերում են մեզ և մեր երեխաներին: Իսկ եթե գրքույկը կարդալուց հետո ձեզ մոտ դեռևս հարցեր մնան, կարող եք խորհրդակցել «Փինք» իրավապաշտպան ՅԿ-ի (Փինք Արմենիայի) մասնագետների հետ և քննարկել իրավիճակը: Ես էլ եմ տվել այն նույն հարցերը, որոնց պատասխանները դուք փնտրում եք այսօր:

ԻՆՉ Է ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՉ ԿԱՊ ՈՒՆԻ ՄԵՁ ԻՏՏ

Երբ իմ երեխան ասաց, որ ԼԳԲՏ համայնքից է, ես չգիտեի՝ ինչ անել և ինչով կարող էի օգնել նրան: Ինձ հուզում էր այն հարցը, թե ինչ է սեռականությունը, որի մասին երեխաս անընդհատ կրկնում էր, և ես գտա հետևյալ բնորոշումը՝ «**սեռականությունը** ներառում է վարքագծի և գործընթացների, ֆիզիոլոգիական, հոգեբանական, սոցիալական, մշակութային, քաղաքական, հոգևոր կամ կրոնական ասպեկտների լայն շրջանակ, ինչպես նաև սեռական վարք: Սեռականությունը, ինչպես մարդու վարքի այլ ասպեկտները, կրում են կենսաբանական և սոցիալ-մշակութային բնույթ»: Սեռականության որոշ բնութագրիչներ փոխանցվում են գենետիկորեն, իսկ մյուսները ձևավորվում են շրջակա միջավայրի հետ փոխազդեցության արդյունքում:

Ինձ համար պարզ դարձավ նաև, որ սեռականությունը ներառում է մի շարք կարևոր հասկացություններ.

- **Կենսաբանական սեռ** - մի շարք բնութագրիչների համախումբ, ինչպիսիք են սեռական բրոմոսոմները, հորմոնները, սաղմնային բջիջները, արտաքին և ներքին սեռական օրգանները, երկրորդական սեռային հատկանիշները:
- **Գենդերային ինքնություն** - որևէ սեռի կամ գենդերի պատկանելու զգացում, որը պարտադիր չէ, որ համընկնի ծննդյան ժամանակ հաստատված կենսաբանական սեռին:
- **Գենդերային դեր** - մշակութորեն սահմանված դիրքորոշումների, վարքագծի, օրինաչափությունների և անձնային հատկանիշների ամբողջություն, որի դեպքում անհատն ապրում է կարծրատիպորեն սահմանված առնական կամ կանացի սոցիալական դերերով:
- **Սեռական կողմնորոշում** - մշտական հուզական, ռոմանտիկ, զգացմունքային և ինտիմ գրավչություն որոշակի սեռի կամ գենդերի մարդկանց նկատմամբ:

- **Սեռական ինքնություն** - նույնականացում այն մարդկանց հետ, որոնք ունեն նույն կամ այլ սեռական կողմնորոշում, իրեն՝ որպես որոշակի սեռական կողմնորոշում ունեցող անձի գիտակցում:
- **Սեռական վարքագիծ** - սեռական բնույթի գործողությունները, սեռական կենսակերպը արական, իգական կամ այլ սեռի անձի հետ, ինչպես նաև սեփական մարմնի հետ (ձեռնաշարժություն):

ՈՎՔԵՐ ԵՆ ԼԵՍԲԻ, ԳԵՅ ԵՎ ԲԻՍԵՔՍՈՒԱԼ ՄԱՐԴԻԿ

Սեռական կողմնորոշումը մարդու գրավչությունների ամբողջությունն է, «ո՞ւմ եմ ես համարում գրավիչ» հարցի պատասխանը, որն էլ գիտակցելով մարդը կառուցում է իր սեռական կողմնորոշման մասին պատկերացումները և ձևավորում իր սեռական ինքնությունը՝ լեսբի, գեյ, բիսեքսուալ, հետերոսեքսուալ և այլն:

Առանձնացնում են սեռական կողմնորոշման և սեռական ինքնության հետևյալ հիմնական տեսակները՝

- **Տարասեռական (հետերոսեքսուալ)** - յուրաքանչյուր անհատ, որ խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինտիմ և սեռական հարաբերություններ ունենալու ցանկություն ունի այլ սեռի կամ գենդերի անձանց հետ:
- **Նույնսեռական (հոմոսեքսուալ՝ լեսբի կամ գեյ)** - յուրաքանչյուր անհատ, որ խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինտիմ և սեռական հարաբերություններ ունենալու ցանկություն ունի նույն սեռի կամ գենդերի անձանց հետ: Նույնսեռական տղամարդկանց անվանում են գեյ, իսկ

Նույնասեռական կանանց՝ լեսբի:

- **Երկսեռական (բիսեքսուալ)** - յուրաքանչյուր անհատ, որը զգաց- մունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի սեռերի կամ գենդերների նկատմամբ:
Որոշ աղբյուրներ անսեռականությունը ևս համարում են սեռական կողմնորոշման տեսակ:
- **Վնսեռական (ասեքսուալ)** - յուրաքանչյուր անհատ, որը չունի սեռական գրավչություն և ցանկություն: Ասեքսուալ մարդիկ ունենում են նույն հուզական կարիքները, ինչ բոլորը, և ընդունակ են ձևավորել ինտիմ հարաբերություններ:

Սովորաբար մարդու սեռական կողմնորոշումը և սեռական ինքնությունը համընկնում են միմյանց հետ: Մենք ունենում ենք ցանկությունների և գրավչությունների ամբողջություն, կյանքի ինչ-որ փուլում գիտակցում ու ընդունում ենք դրանք, այնուհետև այդ պատկերացումների հիման վրա ձևավորում ենք մեր սեռական ինքնությունը, որը մեր ինքնագիտակցության այն հատվածն է, որը պատասխանում է «ի՞նչ սեռական կողմնորոշում ունեմ ես» հարցին: Օրինակ՝ եթե մարդը գրավչությունների ամբողջություն ունի նույն սեռի կամ գենդերի անհատների նկատմամբ, ապա նա սովորաբար նույնականանում է որպես նույնասեռական՝ լեսբի կամ գեյ: Կամ, օրինակ, եթե կինը գրավիչ է համարում այլ սեռի կամ գենդերի անհատներին, ապա նա սովորաբար նույնականանում է որպես հետերոսեքսուալ՝ տարասեռական: Սակայն միշտ չէ, որ այդպես է լինում: Լինում են դեպքեր, երբ մարդը, ելնելով տարբեր պատճառներից, չի ընդունում սեփական գրավչությունների ամբողջության առկայությունը, և այդ անհատի սեռական ինքնությունը չի համապատասխանում իր սեռական կողմնորոշմանը: Օրինակ՝ հայաստանյան հասարակությունում հաճախ պատահում է, որ տղամարդը գրավչությունների ամբողջություն է ունենում նույն սեռի կամ գենդերի մարդկանց նկատմամբ, սակայն հասարակությունում առկա ճշումների և ընդունված չլինելու վախի պատճառով նույնականանում է որպես հետերոսեքսուալ տղամարդ: Սակայն դրանից նրա գրավչու-



յունների ամբողջությունը, իհարկե, չի փոխվում:

Մյուս կողմից՝ երբ խոսում ենք մարդու սեռական կողմնորոշման մասին, կարևոր է բացի սեռական ինքնությունից տարանջատել նաև մարդու սեռական վարքագիծը: Մեզանից յուրաքանչյուրը դրսևորում է որոշակի սեռական վարքագիծ, որն այլ մարդկանց հետ կենսակերպն ու սեռական գործողություններն են: Մեր սեռական կենսակերպը և գործողությունները սովորաբար համապատասխանում են մեր հուզական, զգացմունքային և սեռական գրավչությունների ամբողջությանը՝ սեռական կողմնորոշմանը: Օրինակ՝ եթե կինը հուզական, զգացմունքային և սեռական գրավչություն ունի նույն սեռի կամ գենդերի մարդու նկատմամբ, ապա նա կարող է սեռական հարաբերություններ ունենալ հենց կանանց հետ: Կամ, օրինակ, եթե տղամարդը գրավչությունների ամբողջություն ունի կանանց նկատմամբ, ապա նա սովորաբար սեռական հարաբերություններ է ունենում հենց կանանց հետ: Սակայն միշտ չէ, որ այդպես է լինում: Հնարավոր է, որ նույնասեռ սեռական կողմնորոշում ունեցող մարդը դրսևորի սեռական վարքագիծ, որն առաջին հայացքից չի համապատասխանում այդ մարդու գրավչությունների ամբողջությանը: Օրինակ՝ հասարակական և տարբեր այլ պատճառներով հետերոսեքսուալ մարդը կարող է սեռական հարաբերություններ ունենալ նույն սեռի կամ գենդերի մարդու հետ, և հակառակը: Այլ բառերով՝ սեռական կողմնորոշումը և սեռական վարքագիծը միանշանակ տարբեր հասկացություններ են և հաճախ կարող են չհամընկնել այն սոցիալական, մշակութային, կրոնական և քաղաքական միջավայրերին, որոնցում մարդիկ ապրում են:

Սեռական կողմնորոշում հասկացությունը սեռական վարքագծից տարբերվում է նրանով, որ վերաբերում է մարդու զգացմունքներին և հույզերին, այլ ոչ թե նրա գործողություններին (վարքագծին): Մարդը կարող է չարտահայտել իր սեռական կողմնորոշումը փաստացի սեռական վարքագծով կամ սեռական գործելակերպով, կամ կարող է նմանակել սեռական վարքագիծ,

որը չի համապատասխանում նրա փաստացի սեռական կողմնորոշմանը: Օրինակ՝ հասարակության կողմից ճշման արդյունքում նույնասեռական տղամարդը կամ կինը կարող են ամուսնանալ այլ սեռի անձի հետ և ամբողջ կյանքի ընթացքում ցուցաբերել հետերոսեքսուալ վարքագիծ, սակայն դա չի փոխում վերջիններիս գրավչությունների ամբողջությունը և սեռական կողմնորոշումը:

Հետերոսեքսուալ տղամարդիկ և կանայք կարող են ցուցաբերել նույնասեռ վարքագիծ տարբեր հանգամանքներում (օրինակ՝ փակ հաստատություններում՝ բանտ, մենաստան, բանակ, հոգեբուժարան և այլն), սակայն, միևնույն ժամանակ, դա չի կարող փոխել այդ մարդկանց սեռական կողմնորոշումը, քանի որ նրանց մշտական հուզական, ռոմանտիկ, զգացմունքային և ինտիմ գրավչությունն ուղղված է դեպի այլ սեռի կամ գենդերի անձանց:

Սեռական կողմնորոշման տեսակների միջև միակ տարբերությունը կայանում է նրանում, թե որ սեռին կամ գենդերին են ուղղած մեր գրավչությունները: Սակայն այդտեղ դրանց տարբերություններն ավարտվում են: Նույնասեռ սիրո ժամանակ արտահայտվում է նույն զգացմունքը, ինչ հետերոսեքսուալ սիրո դեպքում՝ սիրելիի նկատմամբ հարգանքը, հոգատարությունը և խնամքը, սիրելիի հետ շփվելու, շոյելու, սիրով զբաղվելու կամ պարզապես ժամանակ անցկացնելու ցանկությունը: Նույնը վերաբերում է նաև զայրույթին, վեճերին, հարաբերություններում սեփական տեղի համար պայքարին, հատկապես, երբ կա երրորդ անձ, ինչպես նաև մշտական զուգընկեր գտնելու դժվարությանը, իդեալի, արթայագնի կամ արթայադատեր հետևից հավերժ գնալուն:

Յուրաքանչյուր մարդ ընտրում է անձնական երջանկության իր ճանապարհը: Մենք՝ ծնողներս, դրանում կարող ենք ունենալ նվազագույն ազդեցություն: Հիշում էք, թե ինչ պատահեց մեզ, երբ առաջին անգամ սիրահարվեցինք: Կասկածում էինք մեր



զգացմունքների վրա, ցանկանում էինք ազատվել դրանցից, խուսափում էինք միջամտություններից (եթե անգամ դրանք արվում էին ամենամոտ մարդկանց կողմից): Եվ ի՞նչ ասացինք մեր ծնողին, երբ նա ասաց. «Սիրելի՛ս, դու վատա՛հ ես, որ հենց նա է այն մարդը, որն անհրաժեշտ է քեզ երջանկության համար: Ախր դու երիտասարդ ես, դրա համար էլ չես հասկանում, թե ինչ ես ցանկանում: Ամեն ինչ փոխվում է, ամեն ինչ կանցնի»: Երևի կհիշենք, թե ինչպես արձագանքեցինք այդ խոսքերին: Այլ կերպ ասած՝ սերը երբեք երկնագույն կամ վարդագույն չի լինում, այսինքն՝ մենք էլ ենք նման իրավիճակում հայտնվել, երբ մեր կյանքին ու հարաբերություններին փորձել են միջամտել, և, ի վերջո, մեր՝ ծնողներիս բացասական կամ դրական արձագանքից մեր երեխայի զգացմունքները չեն փոխվելու:


Ընդ որում՝ այս զգացմունքը կախված չէ նրանից, թե ով է սիրում (տղա, աղջիկ), և թե ում է ուղղված սերը (նույն, թե այլ սեռի կամ գենդերի անձի): Ինչպես հետերոսեքսուալ, այնպես էլ լեսբի, գեյ և բիսեքսուալ մարդիկ ունենում են երկար (երբեմն ամբողջ կյանքի ընթացքում) հարաբերություններ մեկ զուգընկերոջ հետ: Ոմանք էլ սիրում են միայնությունը: Նրանք բավարարվում են մի քանի ոչ կանոնավոր պատահական հանդիպումներով, կոնտակտներով, կամ էլ շփվում են անկանոն կերպով: Բայց ինչպես հետերոսեքսուալ, այնպես էլ նույնասեռական և բիսեքսուալ սեռականությունը չի սահմանափակվում միայն անկողնով: Լինել նույնասեռական կամ բիսեքսուալ չի նշանակում ունենալ սեռական հատուկ կենսակերպ: Գեյ բժիշկը մնում է սովորական բժիշկ, ինչպես հետերոսեքսուալ խոհարարը՝ պարզապես խոհարար, և լեսբի ուսուցիչը ոչնչով չի տարբերվում հետերոսեքսուալ ուսուցչից. այդ ամենը որևէ կապ չունի նրանց սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության հետ: Այլ կերպ ասած՝ մեզնից յուրաքանչյուրի, այդ թվում՝ մեր երեխայի կենսակերպը որոշվում է բնավորության անհատական հատկանիշներով, ինչպես նաև նրանով, թե ում հետ և ինչպիսի հարաբերություններ ենք կառուցում այժմ և հետագայում:

Հրայր, 25 տարեկան. «Տասներեքից տասնչորս տարեկանում ես հասկացա, որ կանայք ինձ չեն գրավում: Կցկտուր տեղեկություններից, որոնք ես գտա, հասկացա, որ սա «նորմալից շեղում» է: Ես ինքս ինձ չէի ընդունում այնպիսին, ինչպիսին բոլորն էին: Երբ հասակակիցներիցս լսեցի հոմոսեքսուալության մասին գրույցներ, իմ մեջ վախ առաջացավ: Սա իմ կյանքի ամենաբարդ փուլն էր, որը ձգվեց մինչև տասնյոթ տարեկան դառնալս»:

Լարիսա, 25 տարեկան. «Դեռ վաղ տարիքից ինձ հետաքրքրում էին կանայք, բայց երբեք առանձնակի ուշադրություն չեմ դարձրել, մինչև քսան տարեկանում սիրահարվեցի մի կնոջ: Սկսած այդ ժամանակահատվածից՝ ես ընդունեցի ինձ այնպիսին, ինչպիսին կամ, դա իմ կյանքի երջանիկ շրջաններից էր»:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՒՅՆԱՍԵՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՍԵՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նույնասեռականությունը և երկսեռականությունը չեն դիտարկվում որպես հիվանդություն կամ պաթոլոգիա, որը պետք է բուժել: Այն մարդկանց միլիոնավոր հատկությունների նման ևս մեկ հատկությունն է: Որպես օրինակ վերցնենք մարդկանց աչքերի գույնը: Դժվար թե այս դեպքում մենք տարբերությունը դիտարկենք որպես հիվանդություն: Սեռական կողմնորոշման դեպքում ևս մարդկանց մի մասը սիրում է այլ սեռի անձանց, նույնասեռական մարդիկ՝ նույն սեռի անձանց, և բիսեքսուալ մարդիկ՝ մեկից ավելի սեռերի կամ գենդերների. այդպես էլ ոմանց մոտ աչքերը երկնագույն են, ոմանցը՝ սև, ուրիշներինը՝ կանաչ: Անգամ ներկայումս դուք կարող եք հանդիպել այնպիսի տեղեկության, իբր նույնասեռականությունը հիվանդություն է: Իրականում նախորդ դարում այն համարվել է հիվանդություն, որը փորձում էին բուժել տարբեր միջոցներով: Սակայն 1950-ականներից



սկսած տարաբնույթ գիտնականներ սկսեցին ուսումնասիրել սեռական կողմնորոշումը (Է. Յուկեր, Ա. Կիսսի), և արդյունքում լույս տեսան տարբեր հետազոտություններ, իրականացվեցին մի շարք գիտական ուսումնասիրություններ և բացահայտվեցին «բուժման» անհաջող փորձեր, որոնք հերքեցին նույնասեռականության հիվանդություն լինելու վարկածը: ***Նման հետազոտությունների հիման վրա 1973 թվականին Ամերիկյան հոգեբուժական ասոցիացիան նույնասեռականությունը և երկսեռականությունը հանում է ճոզեկան և մտավոր խանգարումների շարքից:***¹ Իսկ ՄԱԿ-ի Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱԶԿ) փորձագետները 1990 թվականի մայիսի 17-ին քվեարկում են նույնասեռականությունը հիվանդությունների միջազգային դասակարգումից (ՀՄԴ-10) հանելու օգտին, որն ուժի մեջ է մտնում 1993 թվականին²: Կարևոր է նշել, որ այն ընդունում և օգտագործում են նաև ՀՀ մասնագետները: Շատ երկրների ազգային հոգեբուժական և հոգեբանական ասոցիացիաներ (ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Ռուսաստան, Հարավաֆրիկյան Հանրապետություն և այլ երկրներ) պաշտոնապես հայտարարել են իրենց մասնագիտական դիրքորոշումն առ այն, որ ***«նույնասեռականությունը և երկսեռականությունը հիվանդություն չեն համարվում, հետևաբար մասնագետների կողմից դրանք փոխելու ցանկացած դիտարկում կամ փորձ համարվում է հակաէթիկական»:*** Իսկ ինչ վերաբերում է «բուժման» փորձերին, ***ապա Ամերիկյան հոգեբանական ասոցիացիան 1990 թվականին հաստատել է, որ չկա գիտական ապացույց, որը ցույց կտա սեռական կողմնորոշումը փոփոխելու բուժումների արդյունավետությունը:*** Ի վերջո, այն սեռական վարքի ուղղակի փոփոխություն չէ, այլ առաջին հերթին զգացմունքների և սեռական ինքնության փոփոխություն, անձի ինքնընկալման և հասարակության մեջ դերի վերակազմավորում,

1- Jack Drescher, Carol North. "Out of DSM: Depathologizing Homosexuality". <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC4695779/>. 2015

2- Richard D. Lyons Special to The New York Times. "Psychiatrists, in a Shift, Declare Homosexuality No Mental Illness". <https://www.nytimes.com/1973/12/16/archives/psychiatrists-in-a-shift-declare-homosexuality-no-mental-illness.html>. 1973.
World Health Organization. The ICD-10 Classification of Mental and Behavioural Disorders. <https://apps.who.int/iris/handle/10665/37958>.


որը ստիպողաբար և անգամ մարդու համաձայնությամբ այնքան էլ դյուրին և անվտանգ երևույթ չէ տվյալ անձի հոգեկան բարօրության պահպանման տեսանկյունից:

Այժմ փորձագետները հակաէթիկական են համարում հատուկ «բուժման» միջոցով Էուբայան այն փոփոխությունը, որը մարդկային ամբողջության կարևոր բաղադրիչներից է: Այլ կերպ ասած՝ տարբեր մասնագիտացումներով բժիշկներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, մարդաբաններ, սոցիոլոգներ և այլ մասնագետներ հաստատում են, որ Նույնասեռականությունը և երկսեռականությունը մարդկության ամբողջ պատմության ընթացքում գոյություն ունեցած մարդկային Էուբայան բազմազանության բնական արտահայտումներն են:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՈՐ ԱԶԴՈՒՄ ԵՆ ՄԱՐԴՈՒ ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ

Այս հարցը չունի միանշանակ պատասխան: Գիտության մեջ Նույնասեռականության կամ երկսեռականության ծագման վերաբերյալ այնպիսի տեսություն գոյություն չունի, որը կարելի կլիներ միակ ճշմարիտը համարել: Նույնասեռականության և երկսեռականության «պատճառները» և՛ կենսաբանական են, և՛ սոցիալական:

Հետազոտություններից մեկը հաստատում է գենետիկական ծագումը, իսկ որոշները պատասխանը փնտրում են մարդու ուղեղի առանձնահատկությունների ուսումնասիրության մեջ: Գիտնականների մեծամասնությունն այս պահին այն կարծիքին է,



✧ որ սեռականության տեսակի ձևավորման վրա ազդում են մի շարք գործոններ, այդ թվում՝ հորմոնալ և գենետիկ:

Երբեմն կարող ենք հանդիպել իրենց մասնագետ համարող անհատների, որոնք, օրինակ, կարող են ներկայանալ որպես կենսաբան կամ բժիշկ՝ առաջ տանելով այն գաղափարը, որ երեխայի մոտ նույնասեռականությունը ձևավորվում է կնոջ հղիության ընթացքում կամ երեխայի դեռահասության շրջանում, և ծնողները պարտավոր են զգույշ լինել և կանխարգելել նույնասեռական «հակումները»: Նման անձանց հետ առնչվելիս կարևոր է հիշել, որ նման պնդումները անհիմն են և բազմաթիվ անգամներ հերքվել են հենց գիտական համայնքի կողմից: Փաստացիորեն, լեսբի, գեյ, բիսեքսուալ դառնալը սեփական ընտրության կամ ծնողների որոշ սխալների հետևանքով անհնար է. անհնար է այնպես, ինչպես հստակ ընտրությամբ թո սեռի մարդուն սիրահարվելը կամ բնական ճանապարհով աչքերի գույնը փոխելը: Այս նպատակով Ամերիկյան հոգեբանական ասոցիացիան, Ամերիկյան հոգեբուժական ասոցիացիան և ԱՄՆ սոցիալական աշխատողների ազգային ասոցիացիան 2006 թվականին արեցին հետևյալ հայտարարությունը.³ «Այժմ չկա գիտական կոնսենսուս, թե որոնք են հանդիսանում հետերոսեքսուալ, բիսեքսուալ և հոմոսեքսուալ դառնալու պատճառները»:

Ապացուցված է, որ մեծահասակ լեսբիների և գեյերի մեծամասնությունը դաստիարակվել է հետերոսեքսուալ ծնողների կողմից, իսկ լեսբի և գեյ ծնողների կողմից դաստիարակվող երեխաների ճշող մեծամասնությունը հետերոսեքսուալ է: Ինչպիսին էլ լինեն գիտական բացահայտումները, պետք է հիշել, որ լեսբի, գեյ և բիսեքսուալ անձանց համար իրենց սեռական կողմնորոշումը համարվում է իրենց կյանքի կարևոր բաղադրիչներից մեկը, ինչպես և հետերոսեքսուալ սեռական կողմնորոշումը՝

3 - American Psychological Association. "Answers to Your Questions For a Better Understanding of Sexual Orientation & Homosexuality". <https://www.apa.org/topics/lgbtq/orientation.pdf>. Retrieved January 16th, 2022.


հետերոսեքսուալ մարդկանց համար, որոնք չեն հանդուրժում որևէ միջամտություն:

Ինչ վերաբերում է գենդերային ինքնությանը՝ այն կապված է անձի զգացածի հետ՝ արդյոք նա իրեն նույնականացնում է իր կենսաբանական սեռի հետ, թե՞ ոչ: Դա վերաբերում է յուրաքանչյուր անձի խորը ապրումներին և անհատական փորձին, ինչպես նաև ներառում է սեփական մարմնի զգացումը և մյուս արտահայտչամիջոցները՝ հագուստը, աքսեսուարները, շարժումները և այլն:

«Ինձ թվում էր, թե իմ երեխան «վատ շրջապատում» է հայտնվել, ու նրան ներքաշել են այդ գաղափարների մեջ, վստահ եմ՝ ինչ-որ պահից սկսած դուք էլ եք այդպես մտածել, բայց ձեր երեխան, հնարավոր է, վաղուց գիտեր իր սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին: Որպես կանոն՝ մենք՝ ծնողներս, մեր երեխաների հետ քիչ ենք խոսում կամ ընդհանրապես չենք խոսում սեռականության մասին, այդ իսկ պատճառով նրանք փորձում են ինքնուրույն գտնել տեղեկատվություն, որպեսզի հասկանան, թե ինչ են զգում: Որոշ ծնողներ, ինչպես՝ ես, երբ իմացա երեխայիս սեռական կողմնորոշման մասին, կարծում էի, որ դա իմ սխալն է, ու հնարավոր է, որ ես թերացել եմ, սակայն LGBS երեխաները ամենատարբեր ընտանիքներից են, և դա բնավ կապ չունի ինձ կամ ձեզ հետ»:

ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՉԻՆՔ. ՈՎԹԵՐ ԵՆ ՆՐԱՆՔ

Մեր հասարակությունում կան մարդիկ, որոնց գենդերային ինքնությունը տարբերվում է հասարակության մեջ ընդունված «կին» կամ «տղամարդ» գենդերային դերերից: Այդ մարդիկ ապրում են մեզ հետ, մեր կողքին, կարող են լինել մեր ընկերը, հարևանը, համադասարանցին, երեխան կամ փողոցի անցորդը: Նման առանձնահատկություն ունեցող մարդկանց գիտության մեջ անվանում են տրանս կամ տրանսգենդեր:



Տրանս կամ **տրանսգենդեր** եզրույթը վերաբերում է այն անձանց, ում գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը տարբերվում է ծննդյան ժամանակ հաստատված սեռից:

Տրանսգենդեր անձն ապրում է իր զգացած գենդերին համապատասխան, ընդ որում՝ բժշկական միջամտության ենթարկվելը պարտադիր պայման չէ: Այլ կերպ ասած՝ նրանք մարդիկ են, որոնք «անհարմար» են զգում ծննդյան ժամանակ իրենց վերագրված գենդերից, ապրում և իրենց դրսևորում են այլ գենդերին բնորոշ ձևով և, ամենակարևորը, իրենց զգում են որպես այլ գենդերի պատկանող անհատ: Օրինակ՝ եղել են այնպիսի դեպքեր, երբ մարդը ծնվել է իգական սեռի հատկանիշներով, բժիշկը երեխայի սեռը հաստատել է իգական, հարազատները նրան մեծացրել են մեր հասարակությունում աղջկան բնորոշ սպասելիքներին համապատասխան, բայց, անկախ ամեն ինչից, մարդը ներքուստ իրեն տղա կամ տղամարդ է զգացել, սակայն, այնուամենայնիվ, չի ցանկացել փոխել մարմինը, այլ միայն կերպարանքն ու դրսևորումը:

Տրանսսեքսուալ այն անհատն է, որը լիովին նույնականանում է հաստատված սեռին հակառակ կամ այլ գենդերային դերին համապատասխան, և մշտապես ցանկանում է ապրել իր նախընտրած գենդերային դերով: Տրանսսեքսուալությունը հաճախ ուղեկցվում է սեփական առաջնային և երկրորդային սեռային հատկանիշների ուժեղ մերժմամբ և նախընտրած գենդերին բնորոշ մարմին ունենալու ցանկությամբ: Տրանսսեքսուալ անհատը կարող է ցանկանալ բժշկական միջամտություն իրականացնել, սակայն դա պարտադիր պայման չի հանդիսանում, ինչպես նաև կարող է սեռափոփոխություն կատարել՝ արականից իգական կամ իգականից արական, որը շատ դեպքերում ներառում է նաև հորմոնային թերապիա և սեռական օրգանների վիրահատություն (սեռի փոփոխության վիրահատություն): Այլ կերպ ասած՝ տրանսսեքսուալ անձանց ոչ միայն գենդերային ինքնությունն է, որ չի համապատասխանում

Նրանց վերագրվող գեղեցիկ, այլև սեփական կենսաբանական սեռի հետ անհարմարություն ունենալը: Օրինակ՝ եթե անհատի կենսաբանական սեռն արական է, սակայն նա զգում է, որ «սխալ» մարմնում է ծնվել և ցանկանում է լինել իգական սեռի, ապա նա ունի անհարմարություն սեփական կենսաբանական սեռի հետ:

Քիզեղեղն այն անհատն է, որն ինքն իրեն նույնականացնում է մե՛կ որպես կին, մե՛կ որպես տղամարդ՝ անկախ կենսաբանական սեռից:

Ոչ քիևար մարդիկ կարող են իրենց նույնականացնել միաժամանակ և՛ որպես կին, և՛ որպես տղամարդ (անդրոգին), կամ ոչ որպես կին և ոչ էլ որպես տղամարդ (ագեղեղեր): Հնարավոր է նաև, որ նրանց գեղեցիկային ինքնությունը պարբերաբար փոփոխվի (քիզեղեղեր, գեղեղերֆլուիդ):

Քիևար համակարգից դուրս գեղեցիկային ինքնություններ և գեղեցիկային արտահայտումներ գոյություն են ունեցել տարբեր ժամանակաշրջաններում և դեռևս գոյություն ունեն տարբեր մշակույթներում (օրինակ՝ ֆա՛աֆաֆիններ և մահու՝ Ինդոնեզիա, հիջրա՝ Հնդկաստան, բերդա՝ բնիկ ամերիկացիներ և այլն):

Տրանսգեղեղեր մարդիկ, ինչպես ցիսգեղեղեր տղամարդիկ և կանայք, կարող են ունենալ տարբեր սեռական կողմնորոշում: Տղամարդու գեղեցիկային ինքնությունը չի հակասում մեկ այլ տղամարդու նկատմամբ սեռական գրավչություն ունենալուն:

Որևէ սեռի կամ գեղեցիկի մարդու հետ ինտիմ հարաբերություններ սկսելու համար սեփական կենսաբանական սեռի փոփոխության կարիք չկա: Այսպիսով՝ սեռի փոփոխության են դիմում այն մարդիկ, որոնց ֆիզիոլոգիական սեռը չի համապատասխանում իրենց գեղեցիկային ինքնընկալմանը՝ անկախ իրենց սեռական կողմնորոշումից: Նման վիրահատություններ արվում էին դեռևս հորիզոնային Միության ժամանակաշրջանում, երբ արդեն պարզ էր, որ



մարդուն հակառակը համոզել հնարավոր չէ: Բացի այդ, համոզելը կարող է վտանգ ներկայացնել կյանքի համար, քանի որ տրանսսեքսուալ մարդու համար «ուրիշ մարմնում» ապրելն այնքան անտանելի է, որ կարող է հանգեցնել օրինակ, ինքնասպանության: Վիրահատության պատրաստվող տրանսսեքսուալ անձանց ծնողները և ընտանիքի անդամները պետք է իմանան և հասկանան, որ իրենց երեխան հոգեբանական աջակցության խիստ կարիք ունի: Նախքան վիրաբուժական միջամտությունը՝ հորմոնային թերապիաները, սեռափոխությունը և փաստաթղթավորումը ուղեկցվում են բարդ և դժվար ապրումներով:

Արո, 27 տարեկան. «Այն բանից հետո, ինչ գիտակցեցի, որ ես ինձ կնոջ մարմնում լավ չեմ զգում և ուզում եմ տղամարդ լինել, չգիտեի՝ ինչպես ապրել ու ինչպես դրա մասին բարձրաձայնել ընկերներիս, առավել ևս՝ ծնողներիս մոտ: Իրավիճակը ինձ անելանելի էր թվում, ու ես մեռնել էի ուզում: Ես կենսաբանորեն աղջիկ էի ծնվել, բայց չէի կարողանում ներդաշնակ կերպով ապրել, անգամ ինձ չէի ուզում տեսնել հայելու մեջ: Կնոջը տրվող դերերից մի քանիսն ինձ ի սկզբանե տհաճ էին, որոշները հարգանք էին առաջացնում, բայց իմ երջանիկ կին լինելու փնտրտուքները խորտակվեցին, երբ հասկացա, որ ինքս ինձ խաբում եմ և ապրում ոչ իմ կյանքով: Մանկությունից ինձ ավելի շատ գրավել են այն արժեքները, որոնք համարվում են տղամարդկային, բայց հազիվ թե այն ժամանակ կարողանայի ինձ տղամարդ ընկալել: Ես միշտ սիրել եմ տղամարդուն հատուկ վարք ցուցաբերել, հագնել տղամարդու հագուստ, կռիվներ սարքել տղաների հետ կամ պաշտպանել ընկերներիս. այդպես ինձ լավ էի զգում»:

ՆՈՒՅՆԱՍԵՌԱԿԱՆ, ԵՐԿՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՆՍ ՄԱՐԴԻԿ ԱՄԵՆՈՒՐ ԵՆ

Նույնասեռական, երկսեռական և տրանս մարդիկ ապրում են ամենուր. նրանք, օրինակ, կարող են լինել ձեր հարևանները:

Նրանք կարող են խանութում ձեր կողքին կանգնել, կարող են ձեզ օգնել աշխատավայրում, հիվանդանոցում, առողջարանում և այլն: Նրանք մեզ նման սովորական մարդիկ են:

Եթե կարծում եք, որ ձեզ շրջապատող մարդիկ կամ ընտանիքները բացառապես հետերոսեքսուալ են, ապա սխալվում եք: Հայաստանում շատ նույնասեռական տղամարդիկ և կանայք հասարակության, ծնողների, եկեղեցու ճնշման, բռնության դրսևորումների արդյունքում ամուսնանում են և ապրում հետերոսեքսուալ կյանքով, ինչը նրանց համար հասարակության պահանջներին համապատասխանելու եղանակ է: Հնարավոր է՝ նրանք ուրախ են, որ ունեն երեխաներ, բայց նրանց սիրտը պատկանում է իրենց սեռի զուգընկերոջը, որոնցից միգուցե հավերժ բաժանված են: Նրանք, հնարավոր է, տառապում են, քանի որ երիտասարդ տարիներին իրենց մեջ ուժ չեն գտել ազնիվ լինելու իրենց և իրենց շրջապատի առաջ: Վաղ թե ուշ կգա այն պահը, երբ նրանք անկեղծ կլինեն իրենց հետերոսեքսուալ զուգընկերոջ հետ: Այդ պահին նրանք իրենց կյանքը կապրեն ամենասկզբից՝ զոջալով, որ անհրաժեշտ պահերին իրենց կողքին եղած հարազատ մարդկանց հետ անկեղծ չեն եղել, մարդիկ, որոնք նրանց կօգնեին լինել այնպիսին, ինչպիսին իրականում կան: Դա կախված է ձեզնից, սիրելի՛ մայրեր և հայրեր. հանե՛ք ձեր երեխային ընդհատակից, ընդունե՛ք այդ փաստը, կա՛մ էլ ձեր լուռ համաձայնությամբ ընտրե՛ք պայմանական, բայց նրա համար աղետալի համարվող հետերոսեքսուալ ընտանիքը: Եվ հետո, պետք է հուսալ, որ այդ ամենը չի փլվի քարտերից տնակի պես: Հոգ տարե՛ք ձեր երեխայի մասին հիմա, քանի դեռ նա փոքր է, որպեսզի հետո, երբ մեծանա, ձեզ համար ցավոտ չլինեն նրա տառապանքները և ձեզ ուղղված հանդիմանանքն այն առիթով, որ նրան չեք օգնել իր ուղին ընտրելու հարցում:

Երբ իմանաք ձեր երեխայի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին, դա կլինի ձեր կյանքի դժվարին փուլերից մեկը, սակայն միևնույն ժամանակ կծնվեն նոր՝ ավելի սերտ և ամուր հարաբերություններ ձեր և նրա միջև: Մտերմացնող այդ



ճանապարհը բարդ է, և անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ: Այն, որ դուք կարդում եք այս գրքույկը, արդեն իսկ ցույց է տալիս այս ամենի միջով անցնելու ձեր պատրաստակամությունը: Նախ և առաջ, մի՛ փորձեք թաքցնել ձեր զգացմունքները. չէ՞ որ դուք հավանաբար նեղացած եք, հիասթափված կամ շփոթված: Ընդունե՛ք այդ զգացմունքները. դրանք բնական են՝ հաշվի առնելով մեր հասարակության մեջ լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր մարդկանց նկատմամբ վերաբերմունքը:

Այնուամենայնիվ, եթե իսկապես սիրում եք ձեր երեխային, նախ և առաջ փորձեք փոխըմբռնման ձև գտնել նրա հետ, աշխատեք ընդունել նրան այնպիսին, ինչպիսին կա, աջակցեք նրան այս չափազանց բարդ ժամանակահատվածում: Թեև ձեզ թվում է, թե ձեր միջև պատ կա, թե կորցրել եք միմյանց հետ կապը, այնուամենայնիվ, դա այդպես չէ: Ձեր երեխան նույն մարդն է, ինչ երեկ էր: Միակ բանը, որ փոխվել է, իր մասին ձեր գաղափարներն են: Այո՛, նա այժմ ուրիշ է, բայց չէ՞ որ պարզ դարձան ձեր զավակի անհատականության ձեր պատկերացումները: Այն երիտասարդները, որոնք չհասկացված են ծնողների կողմից, հակված են ինքնասպանության, թմրադեղերի կամ ալկոհոլի չարաշահման: Շատ են նաև այն լեսբի և գեյ երիտասարդները, որոնք երկակի կյանքով են ապրում՝ խուսափելով քամինգ աութից (ազնվանալուց), ընդհատակից դուրս գալուց: Որոշ դեռահասներ պաշտպանում են իրենք իրենց՝ սահմանափակելով ծնողների հետ իրենց հարաբերությունները: Եթե ձեր երեխան իր մեջ ուժ է գտել պատմելու ձեզ իր լեսբի, գեյ, բիսեքսուալ կամ տրանսգենդեր լինելու մասին, ուրեմն նա վստահում և սիրում է ձեզ: Ի պատասխան նրա անկեղծության՝ դուք պետք է ցույց տաք նույնչափ վստահություն և սեր՝ ընդունելով նրան այնպիսին, ինչպիսին կա:

ԱՁԵՎԱԿՈՒՄ (ՔԱՄԻՆԳ ԱՈՒԹ)

Հրայր, 25 տարեկան. «Ես սկսեցի փնտրել դրանից ազատվելու ձևեր՝ կրոնի միջոցով: Տևից հեռանալով՝ հաճախ էի մտածում իմ

ինքնության մասին: Տասնյոթ տարեկանում ընդունվելով բուհ՝ ես արդեն գիտեի, թե ով եմ ես: Սակայն անտանելի էր գտնվել մի լսարանում, որտեղ տղաները ծաղրում էին գեյերին, որպեսզի հաճոյանան աղջիկներին, և ատում էին քեզ՝ իրենցից տարբեր լինելու համար: Ես իմ ապրումներով որևէ մեկի հետ կիսվելու հնարավորություն չունեի, չէի կարողանում կենտրոնանալ ուսմանս վրա: Կուրսեցիներս ինձ նվաստացնող հարցեր էին տալիս՝ բացահայտելու համար, թե գեյ եմ արդյոք: Վերջիվերջո, ինձ մոտ նյարդային պոռթկում եղավ, և ինձ համար ավելի ծանր էր ամեն օր մտնել ուսումնական հաստատություն: Իմ կյանքի ամենասարսափելի փուլն էր: Ստածում եմ, որ ինձ շատ օգնեց այլ լեսբի և գեյ մարդկանց հետ շփումը: Նրանցից շատերը ինձ նման էին՝ վախենում էին իրենց սեռական կողմնորոշումից, թաքցնում էին բոլորից: Ես որոշեցի, որ չեմ ուզում թաքցնել և վախենալ: Սեռական կողմնորոշումն իմ էության մի մասն է, և ես չեմ կարող այն փոխել»:

ԻՆՉ Է ՔԱՄԻՆԳ ԱՈՒԹԸ (ԱՁՆՎԱԿՈՒՄ)

Չնայած «քամինգ աութ» եզրը հայերենում համարժեք չունի, այնուամենայնիվ, մենք այն սահմանել ենք որպես «ազնվացում»: Այն առաջացել է անգլերեն “coming out” արտահայտությունից և բառացիորեն թարգմանվում է որպես «դուրս գալ»: Քամինգ աութը սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հանրային և կամավոր հիմքով բացահայտման գործընթացն է: Անգլերենում ամբողջական եզրը հետևյալն է՝ “coming out of the closet”, որը բառացիորեն թարգմանվում է որպես «պահարանից կամ ընդհատակից դուրս գալ»: «Քամինգ աութ անել» նշանակում է չթաքցնել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը շրջապատից, այսպես ասած՝ ազնվանալ: «Մնալ ընդհատակում (պահարանում)» նշանակում է թաքցնել այդ հատկանիշները մյուսներից և հանրայնորեն չհայտարարել սեփական սեռական կողմնորոշման մասին՝ այն ներկայացնելով որպես հետերոսեք-



սուալ, իսկ գենդերային ինքնությունը՝ ցիսգենդեր, այսինքն՝ ծնված պահին հաստատված կենսաբանական սեռին համապատասխան: Սեփական ինքնության կամովի բացահայտումն ազատում է մարդուն ներքին տազնապներից, վստահություն է տալիս սեփական ուժերի նկատմամբ, բարելավում է ինքնընկալումը և մեծացնում է ուրիշների նկատմամբ վստահությունը:

Քամինգ աուլթը նույնասեռական, բիսեքսուալ կամ տրանսգենդեր լինելու գիտակցումն է, ընդունումը և բացահայտումը մարդկանց առջև: Քամինգ աուլթը միայն սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին ուրիշին պատմելու փաստը չէ, այն երկարատև գործընթաց է, որն անուղղակիորեն կապված է մարդու ինքնընկալման, իր և իր սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության նկատմամբ վերաբերմունքի հետ:

Քամինգ աուլթ տերմինը առաջին անգամ օգտագործվել է 1869 թվականին՝ գերմանացի փոքրամասնություն կազմող անձանց իրավունքների պաշտպան Կարպ Յենրի Ուլրիկսի կողմից: Ուլրիկսը գտնում էր, որ փոքրամասնությունների թաքնված գոյությունը նվազեցնում է նրանց ազդեցությունը հասարակական կարծիքի վրա, ուստի նա կոչ էր անում նույնասեռական մարդկանց տեսանելի դառնալ քամինգ աուլթի միջոցով:

Երիկ Երիկսոնն իր աշխատությունում⁴ ներկայացնում է, որ անձն իր հոգեբանական զարգացման ընթացքում անցնում է ութ փուլով: Նա փաստում է, որ հոգեբանական ինքնության ձևավորման գործում հոգեկան առողջության համար կարևոր է սեռականության ընկալումը և դրա ընդգրկումը ընդհանուր կերպարում:

Ամերիկացի սոցիոլոգ Ռիչարդ Թրոյդենը առաջարկեց հետևյալ չորս փուլերը՝ նկարագրելու համար լեսբիների և գեյերի սեռական ինքնության ձևավորման գործընթացը.

4 - Gabriel A. Orenstein; Lindsay Lewis. "Eriksons Stages of Psychosocial Development". <https://www.ncbi.nlm.nih.gov/books/NBK556096/>. 2022.

Կանխագագման փուլ - մարդն իրեն չի զգում այնպիսին, ինչպիսին բոլորն են: Նրա մոտ առաջանում է անհասկանալի անհանգստություն. «Չգիտեմ՝ ինչու եմ տարբերվում»: Այս զգացողությունը, ի տարբերություն մյուսների, առաջանում է մինչև սեռական հասունացումը (մոտավորապես մինչև 13 տարեկանը):

Կասկածի փուլ - մարդու մոտ կասկածներ են առաջանում իր հետերոսեքսուալ ինքնության վերաբերյալ՝ նույնասեռ կամ բիսեքսուալ զգացմունքների հայտնվելու պատճառով, որոնք նա դեռ չի կարող հստակ սահմանել: Սա հոգեբանորեն լարված շրջան է, որը հաճախ ուղեկցվում է ներքին կոնֆլիկտով: Սովորաբար այս շրջանն ի հայտ է գալիս սեռական զարգացման ժամանակահատվածում (13-17 տարեկան):

Ինքնության ընդունման փուլ - այս փուլն ընթանում է տարբեր ձևերով: Մեծ դեր է խաղում շրջակա միջավայրը: Որքան հասարակությունը հանդուրժող է նույնասեռական և բիսեքսուալ մարդկանց նկատմամբ, այնքան հեշտ է դեռահասների համար հաղթահարել ներքին կոնֆլիկտները և ընդունել իրենց սեռական կողմնորոշումը: Ինքնության ընդունումը կարող է տեղի չունենալ հասարակական թշնամանքի պատճառով:

Լեսբի, գեյ, բիսեքսուալ (ԼԳԲ) համայնքի անդամ նույնականանալու փուլ - մարդը գիտակցում է ոչ միայն իր նույնասեռական կամ բիսեքսուալ ինքնությունը, այլև իրեն նույնականացնում է որպես լեսբի, գեյ կամ բիսեքսուալ: Այդ պահին տեղի է ունենում սեռականության և զգացմունքայնության միջև կապի հաստատումը և սեռականության ինտեգրումը սեփական «ես»-ում:

Քամինգ աութի գրեթե նույն փուլերով են անցնում տրանս անձինք, երբ ընդունում են իրենց գենդերային ինքնությունը, որը տարբերվում է իրենց ծնվելու պահին հաստատված կենսաբանական սեռից: Տրանսգենդեր անձանց քամինգ աութի գործընթացի ժամանակը կարող է կախված լինել նրանց սեռական կողմնորո-



շումից: Օրինակ՝ շատ հետերոսեքսուալ տրանսգենդեր մարդիկ ըմբռնում են իրենց գենդերային ինքնության և կենսաբանական սեռի անհամատեղելիությունը ավելի վաղ հասակում, քան այն տրանսգենդեր տղամարդիկ և կանայք, որոնք նույնասեռ կողմնորոշում ունեն:

Ինչպես նույնասեռական և բիսեքսուալ անձանց սեռական կամ գենդերային ինքնության ձևավորման «հստակ» պատճառները, այնպես էլ քամինգ աուօթի գործընթացն ու դրա տեսական հիմնավորումը բանավեճերի տեղիք են տալիս: Ձևակերպված մոդելներից ոչ մեկը չի կարող համարվել ունիվերսալ, այնուամենայնիվ, մեկ հարցի շուրջ կա համաձայնություն: Գործընթացը գծային չէ, և մարդը կարող է տարբեր փուլերի ընթացքում միաժամանակ մի քանի հոգեբանական խնդիր լուծել: Նույնասեռական, բիսեքսուալ կամ տրանսգենդեր մարդիկ իրենց ներսում ապրում են բոլոր վերոնշյալ փուլերը: Առավել հաճախ նրանք ոչ ոքի հետ չեն կիսվում իրենց զգացմունքներով և փորձով: Իհարկե, վերոնշյալ բոլոր փուլերը համընդհանուր չեն: Օրինակ՝ որոշ բիսեքսուալ մարդկանց մոտ այդ գործընթացը կարող է տևել ավելի երկար: Շատ լեսբիներ հակված են այն կարծիքին, որ աղջկա հետ հարաբերվելու անհրաժեշտությունը պայմանավորված է ընկերական բնական կապվածությամբ: Որոշ դեպքերում նրանք իրենց սեռական կյանքը սկսում են տղամարդկանց հետ, բայց հետագայում հասկանում են, որ սխալվել են, և փնտրում են կին զուգընկեր: Որոշ լեսբի և գեյ մարդիկ վաղ տարիքից ըմբռնում են իրենց սեռական կողմնորոշումը, ուստի իրենց համար սեփական «ես»-ի առաջ խոստովանության գործընթացը պակաս ցավոտ է լինում: Ամբողջական քամինգ աուօթի անհրաժեշտությունը նրանց մոտ ավելի վաղ է առաջանում, քան այն մարդկանց մոտ, որոնք իրենց սեռական կողմնորոշումն ըմբռնում են ուշ տարիքում: Գործնականում նույնը վերաբերում է տրանսգենդեր անձանց, սակայն գենդերային ինքնությունը թաքցնելը կամ ճնշելն ավելի բարդ է, քան սեռական կողմնորոշումը:

Արթուր, 29 տարեկան. «Ինձ համար դժվար էր այն, որ ես պետք է իմ ինքնության մի մասը թաքցնեի: Ու ինչ-որ բաներից ինձ զրկելով՝ հասկացա, որ դատարկ կյանքով եմ ապրում: Հետո որոշեցի, որ պետք է ասեմ իմ ծնողներին, որովհետև չէի ուզում երկու կյանքով ապրել, որովհետև ես մի մարդ եմ»:


ԻՆՉ ՁԳԱԿԻ ԵՍ, ԵՐԲ ԵՐԵԽԱՍ ԻՆՉ ՊԱՏՄԵՅ ԻՐ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երբ երեխաս անկեղծացավ, չգիտեի՝ ինչ անել, լաց էի լինում, կարծում էի, թե ժամանակավոր է, կանցնի, մտածում էի՝ որտեղ եմ սխալվել, բայց նա իմ երեխան է, և նրա նույնաստեռական լինելը այդ փաստը չի փոխում: Շաբաթներ անց ես հասկացա, որ նրա կողքին պետք է լինեմ: Հետագայում տարբեր աղբյուրներից նյութեր կարդալով՝ հասկացա, որ երեխայիս ազնվանալուց հետո ես անցել եմ հետևյալ փուլերով.

Շոկային փուլ - սա առաջին արձագանքն է, որը կարող է տևել մի քանի րոպեից մինչև մի քանի ամիս: Ամեն ինչ կախված է նրանից, թե որքանով է մարդը պատրաստ այդ նորությանը:

Ժխտման փուլ - սա պաշտպանողական արձագանք է, որն առաջանում է գրուցակցի մոտ որևէ «ցավալի» կամ անցանկալի իրադարձությունից հետո: Այս դեպքում անձը հրաժարվում է ընդունել որևէ անցանկալի երևույթի գոյությունը: Նույնաստեռական, բիսեքսուալ և տրանսգենդեր լինելը հաճախ ընկալվում է որպես հիվանդություն, շեղում կամ վատ դաստիարակության արդյունք: Ժխտման տարբեր տեսակներ կան՝ անտարբերություն, լսածն ընդունելու մերժում, թեմայի մասին խոսակցությունը շարունակելուց հրաժարում, թշնամանք և այլն:

Մեղքի զգացում - ծնողները, ում առաջ երեխաներն ազնվացել են,



իրենք իրենց հարցնում են. «Ի՞նչն ենք սխալ արել: Ինչու՞մն է մեր մեղքը: Դաստիարակության ո՞ր փուլում ենք վրիպել»:

2գացմունքների արտահայտում - լռությանը և ժխտմանը հաջորդում է զգացմունքների արտահայտման փուլը, որի ընթացքում ծնողները կարող են շարունակել ժխտել իրենց լսած փաստը:

Որոշում ընդունելու փուլ - ժամանակի ընթացքում հույզերը նվազում են: Ծնողները, հարազատները, ընկերները փորձում են օբյեկտիվորեն գնահատել լսածը: Հարազատ մարդիկ կարող են տարբեր որոշումներ ընդունել.

ա) նախկին հարաբերությունների շարունակությունն այն մարդու հետ, որը պատմել է իր նույնասեռական, բիսեքսուալ կամ տրանսգենդեր լինելու մասին, նրա նկատմամբ սիրո արտահայտում և հոգատարություն, բայց սեռականության թեման փակ է,

բ) լավ հարաբերությունների շարունակություն իր ծնողների, հարազատների կամ ընկերների հետ ազնվացած մարդու հետ, նրա նկատմամբ սիրո արտահայտում և հոգատարություն, ինչպես նաև հետաքրքրություն՝ ծանոթանալու նրա ապրումներին՝ կապված սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հետ,

գ) իր սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին ազնվացած մարդու հետ մշտական կոնֆլիկտ, ընդ որում՝ ցանկացած պատճառով, և այլն:

Արամ, 27 տարեկան. «Մայրս ու հայրս գուշակում էին, որ գեյ եմ: Մի օր մայրս ինձ հարցրեց այդ մասին, իսկ ես չժխտեցի: Նա շոկի մեջ էր: Հորս հետ միասին որոշեցին դիմել հոգեբանի: Հոգեբանը, բավականին մեծ գումար կորզելով ծնողներիցս, սկսեց ինձ հոգեպես ու ֆիզիկապես տանջել, ինչի պատճառով ես հավաքեցի իրերս

և անմիջապես հեռացա ոչ միայն տնից, այլև երկրից: Տարիներ անց վերականգնեցի հարաբերություններս ընտանիքիս հետ, սակայն նրանք դեռ մտածում էին, թե ես պետք է ամուսնանամ աղջկա հետ: Երբեմն ծնողներիս հետ վեճեր ենք ունենում նույնասեր հարաբերությունների մասին. փորձում եմ նրանց բացատրել, որ ես չեմ կարող ամուսնանալ աղջկա հետ»:

Մարինե, 30 տարեկան. «Ես ստիպված էի վարել երկակի կյանք: Մեկն իմ ամուսինն ու երեխան էին, աշխատանքը, ընկերներս, իսկ մյուսը՝ իմ սիրած կինը: Մինչ ամուսնանալս դրանք երբեք չէին խաչվում: Չգացի, որ այլևս չեմ կարող ունենալ երկակի կյանք և որոշեցի խոսել մորս հետ: Մենք լուրջ զրոյց ունեցանք: Մայրս միանգամից առաջ բերեց երեխայիս հարցն ու պնդեց, որ պետք է մոռանամ ընկերուհուս, շարունակեմ կյանքս ամուսնուս հետ, բայց ես կտրականապես մերժեցի՝ ասելով, որ այսպես երջանիկ եմ, և որ չեմ կարող փոխել սեռական կողմնորոշումս: Այդ ամենից հետո սկսվեց սառը հարաբերությունների շրջանը: Ամեն անգամ, երբ փորձում էի նրա հետ այս թեմայով խոսել, կիսվել անձնական հարցերով, բախվում էի չհասկացված լինելու խնդրին: Ամեն ինչ փոխվեց այն ժամանակ, երբ ես նրան առաջարկեցի անձի սեռականության մասին գրականություն կարդալ: Որոշակիորեն ծանոթանալով թեմային՝ մայրս ասաց. «Ես երբեք չեմ կարող հասկանալ քո զգացմունքները, բայց դու իմ աղջիկն ես: Ես ընդունում եմ քեզ այնպիսին, ինչպիսին կաս: Եթե դու երջանիկ լինես, ես ևս երջանիկ կլինեմ»: Այդ ամենից հետո մայրս ինձ համար ուղղակի միայն մայր չէ, այլ նաև մտերիմ ընկեր: Նրա հետ կարող եմ կիսվել իմ ապրումներով և զգացմունքներով: Բայց մայրս միակ մարդը չէր, ում պատմեցի այդ մասին: Իմ մասին գիտեն նաև ընկերներիցս ոմանք: Նրանցից ոչ ոք չիրաժարվեց ինձնից, մենք շարունակում ենք շփվել: Ինչպես նրանք են ասում՝ իրենց համար կարևոր չէ իմ սեռական կողմնորոշումը, այլ կարևոր է իմ ինչպիսի մարդ լինելը»: Ավելի ուշ նաև ամուսնուս հետ խոսելու ուժ գտա. նա բավականին ծանր ընդունեց իմ պատմածը, քանի որ շատ էր սիրում ինձ ու չէր ցանկանում, որ մենք բաժանվեինք: Լինելով գիտակից մարդ՝



Նա ընդունեց ինձ և թույլ տվեց զբաղվել երեխայիս ինամբով: Կարող եմ ասել, որ ես ու Նախկին ամուսինս այժմ շատ ավելի ցերմ հարաբերությունների մեջ ենք, քանի որ այլևս միմյանցից գաղտնիքներ չունենք. յուրաքանչյուրս ապրում ենք մեր կյանքով, հաճախ հանդիպում և համատեղ զբաղվում երեխայի դաստիարակությամբ: Միակ բանը, որ նա ինձ խնդրել է, այն է, որ այլ մարդկանց հետ չկիսվեմ իմ կողմնորոշման մասին, որպեսզի երեխան այդ պատճառով խտրականության չենթարկվի»:

ՄԵՂՔԻ ԶԳԱԿՄԱՆ ԱՌԱՋԱԿՈՒՄ

«Ես որդուս թույլ էի տալիս խաղալ տիկնիկներով»:

«Ամուսինս գերիշխող է»:

«Աղջիկս «տղամարդկային» վարքագիծ ունի»:

«Իմ կինն այնքան նուրբ է մեծացրել տղայիս»:

Այս ցանկը հնարավոր է շարունակել այլ հայտնի արտահայտություններով, որոնք մեզ ստիպում են մեղավոր զգալ մեր երեխայի նույնասեռական, բիսեքսուալ կամ տրանսգենդեր լինելու համար: Մեղքի զգացումը սերտորեն կապված է այն գաղափարի հետ, որ նույնասեռական, բիսեքսուալ կամ տրանսգենդեր լինելը ընկալվում է որպես այլասերություն կամ հիվանդություն: Ինչու՞ է հենց իմ երեխան այդպիսին: Որտե՞ղ է իմ սխալը: Միզուցե դրա պատճառո՞վ է, որ չենք համարձակվում քննարկել մեր խնդիրներն այլոց հետ: Այո՞, քանի որ մենք մեզ մեղադրում ենք դրա մեջ: Բայց երեխայի բնավորությունը միայն մասամբ է ձևավորվում ընտանիքում: Հայտնի է, որ դեռահասների բնավորության փոփոխության վրա ազդում են այլ տարբեր գործոններ, ինչպիսիք են փողոցը, դպրոցը, շրջապատը և այլն: Շրջակա աշխարհի, եղբայրների, քույրերի, ընկերների և այլոց հետ շփումը հարաբերություն-

ների և փոխազդեցությունների երկար շղթա է: Այդ շղթան կարող է ստեղծել որակներ, որոնք երկար տարիներ կգերիշխեն մեր երեխայի բնավորության մեջ՝ որոշելով նրա կենսակերպն ու վերաբերմունքը մարդկանց և կյանքի հանդեպ:

Իրականում, երեխաների մեծ մասն իր սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին իմանում է ավելի շուտ, քան մենք՝ ծնողներս: Եվ երբ երեխան պատրաստ է կիսվել իր ապրումներով, դուք կարող եք նրան խնդրել պատմել ձեզ իր զգացմունքների և մտահոգությունների մասին: Բայց միայն մեկ պայմանով՝ այդ խնդրանքը պետք է հնչեցնել որպես ընկեր, այլ ոչ թե որպես ծնող, որն ունի հարուստ կենսափորձ և ավելի լավ գիտի՝ ինչ է պետք իր երեխային: Իրականում ճիշտ հակառակն է, քանի որ ձեր երեխան ավելի լավ է տեղեկացված այս թեմայից, քան դուք, և թերևս պետք է փորձեք անկեղծորեն հետաքրքրվել այն ամենով, ինչ նա կպատմի: Նա գիտի, թե ազնվականալիս իր համար ինչ նշանակություն ունի: Չնարավոր է՝ նա խնդրի, որ այդ խոսակցությունները մնան ձեր երկուսի միջև, կամ, ընդհակառակը, ասի, որ չի անհանգստանում, թե ում կպատմեք այդ մասին: Շատ հնարավոր է, որ դուք առաջինը չեք, ում նա պատմում է իր գաղտնիքը: Միզուցե դուք դեռ չեք հանդիպել լեսբի, գեյ, բիսեքսուալ կամ տրանսգենդեր մարդու, իսկ ձեր երեխան հանդիպել է: Եթե անգամ ձեր ծանոթների մեջ կան նույնասեռական, բիսեքսուալ կամ տրանսգենդեր մարդիկ, շատ հավանական է, որ նրանց հետ երբևէ չեք խոսել այդ թեմայի շուրջ, իսկ ձեր որդին կամ դուստրը, հնարավոր է, խոսել են: Եթե ձեր խոսակցությունները այս կերպ են ընթանում, ապա համարեք, որ դուք մոտ եք հաղթանակին: Ստացեք ձեր երեխայի մասին ձեզ անհրաժեշտ ինֆորմացիան՝ ցույց տալով, որ նա միայնակ չէ, և որ դուք իր կողքին եք: Ընտանիքում խաղաղություն պահպանելու գործում էական նշանակություն ունեն վստահելի հարաբերությունները: Ձեր երեխան իդեալական չէ, բայց մյուսներից լավը կամ վատն էլ չէ:



ԻՄ ԵՐԵՒԱՆ ՓՈԽՎԵՂ Է

Երեխայի ծնված օրվանից մենք կարծում ենք, թե գիտենք՝ որն է մեր երեխայի համար լավագույնը, գիտենք նրա ճաշակի, երազանքների, հետաքրքրությունների և ցանկությունների մասին: Այո՛, ես նույնպես ունեի իմ պատկերացումները երեխայիս մասին, ունեի հստակ տեսլական, թե ով է նա, ինչ է նրան սպասվում, ինչի է հասնելու: Եվ երբ երեխաս հանկարծ հայտարարեց իր ինքնության մասին, ինձ շփոթության մեջ գցեց: Նման իրավիճակներում շոկը և հիասթափությունը միանգամայն բացատրելի են, քանի որ կոտրվում են երեխայի մասին մեր պատկերացումները, կորցնում ենք մեր տեսլականը և երազանքները, որոնք կապում էինք նրա հետ: Բացի այդ, անհետանում է այն պատրանքը, թե իբր մենք շատ լավ ենք ճանաչում մեր երեխային:

Բայց հաշվի առեք այն, որ երեխաները վաղ թե ուշ կարող են «անակնկալներ մատուցել» ծնողներին՝ անկախ իրենց սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից: Երեխաները սովորաբար չեն ամուսնանում նրանց հետ, ում հավանում են ծնողները, նրանք չեն ընտրում այն մասնագիտությունը, որը ծնողներն են նախընտրում իրենց համար, չեն ապրում այն վայրում, որտեղ ծնողներն են ցանկանում, որ ապրեն: Թվում է, թե երեխաները ստեղծված են նրա համար, որպեսզի կոտրեն ծնողների պատկերացումներն իրենց մասին: Բայց նա, միևնույն է, ձեր երեխան է: Շարունակեք հիշեցնել ինքներդ ձեզ, որ նա երեկվանից հետո չի փոխվել, երբ դուք նույնիսկ չգիտեիք նրա սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին: Նա մնացել է նույնը, պարզապես դուք սկսել եք ճանաչել նրան այլ կողմից: Ոչ թե ձեր երեխան է փոխվել, այլ փոխվել եք դուք և ձեր պատկերացումները նրա մասին: Եվ հիմա պետք է սովորեք ապրել նոր պատկերացումներով:

ԻՆՉՈ՞Ւ և ԱՍՏՄԵԿ ՄԵՁ ԱՅՂ ՄԱՍԻՆ

Ծնողների արձագանքներն ուղղված իրենց երեխայի սեռական կողմնորոշմանը կամ գենդերային ինքնությանը շատ տարբեր են լինում: Որոշները համառորեն ժխտում են իրենց երեխայի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը՝ ասելով որդուն, դստերը և առաջին հերթին իրենք իրենց, որ դա ժամանակավոր է, նշելով՝ «կմեծանա կանցնի»: Որոշները պարզապես անտեսում են. «Լավ, լավ, հետո կխոսենք: Ճաշելո՞ւ ես»: Ուրիշներն էլ չեն ընդունում. «Ապրիր կյանքդ այնպես, ինչպես ցանկանում ես, բայց ես այլևս չեմ ցանկանում լսել քո այլանդակությունների մասին»: Ինչպես որոշ ծնողներ, այնպես էլ ես կարծում էի, որ ինձ ավելի հանգիստ կզգայի, եթե ընդհանրապես չիմանայի իմ երեխայի ինքնության մասին:

Ծանոթ լինելով լեքսի, գեյ, բիսեքսուալ և տրանս անձանց նկատմամբ հասարակության վատ վերաբերմունքին՝ ձեր երեխան, այնուամենայնիվ, իր մեջ քաջություն է գտել ձեզ հետ կիսվելու իր ինքնության մասին: Այս քայլը շատ ռիսկային է ձեր զավակի համար, քանի որ այն ձեր կողմից կարող է ընկալվել որպես կատակ կամ չմտածված քայլ:

Քամինգ աութի համար մեծ քաջություն է պետք: Եթե ձեր երեխան կիսվում է ձեզ հետ իր ամենամեծ գաղտնիքով, ապա դա ոչ թե փորձարկում է, այլ փաստում է այն մասին, որ նա անցել է ինքնաբացահայտման ցավոտ և երկար ճանապարհը: Եթե ձեր երեխան պատմում է ճշմարտությունը, ապա դա նշանակում է, որ նա սիրում է ձեզ և ձեր աջակցության կարիքն ունի: Այս կերպ նա ցույց է տալիս, որ փնտրում է բաց ու ազնիվ հարաբերություններ ձեզ հետ. դա հիանալի է: Այժմ դուք կարող եք սիրել հենց ձեր երեխային, ոչ թե նրա մասին ձեր պատկերացումները: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է հասկանալ և ընդունել երեխայի



Նույնասեռական, բիսեքսուալ կամ տրանսգենդեր լինելու փաստը:

Լենա, 22 տարեկան. «Ուզում եմ հասկանալ՝ ինչո՞ւ: Ինչո՞ւ բարդացնել կյանքը խաբեությամբ (ինձ համար այս ամենը հենց խաբեություն էր): Ապրել այնպես, ինչպես չես ցանկանում, թաքնվել, վախենալ... Ես մորս չպատմեցի իմ մասին մոտ ութ տարի, մինչև դրա պահը չհասունացավ, չունեցա լուրջ հարաբերություններ որևէ մեկի հետ, և խաբեությունը անհնարին դարձավ: Յետո, մինչև չհանդիպեցի իմ միակ ընկերուհուն, ում հետ ուզում էի ընտանիք կազմել, ինձ մոտ իմ սեռական կողմնորոշման մասին մորս պատմելու ցանկություն չառաջացավ: Ես հստակությամբ պատմեցի ամեն ինչ, սակայն մայրս միանգամից չհասկացավ, թե ինչի մասին է խոսքը, բայց ամեն դեպքում ընդունեց ինձ: Նա պարզապես ասաց, որ սիրում է ինձ, կմեռնի առանց ինձ, դրա համար էլ աջակցում է ու չի պատրաստվում դժվարացնել իմ կյանքը: Այդ ամենն արտաբերեց նրանից հետո, երբ ես ասացի, որ իմ վերաբերմունքը նրա նկատմամբ չի փոխվի, ինչպիսին էլ որ լինի իր վերաբերմունքը իմ սեռականության մասին: Ահա այդքանը: Այո՛, սկզբում մեր հարաբերությունները լարված էին, սակայն այժմ ապրում եմ մորս հետ: Այժմ մենք համաձայնության ենք եկել, թեև որոշ ժամանակ առաջ նա ասում էր, որ լեսբիներին և գեյերին պետք է «կանգնեցնել պատի առաջ և կրակել»: Նա հիմա 65 տարեկան է: Հանկարծ պարզվեց, որ սեփական աղջկան կրակելը հեշտ բան չէ»:

Օքսանա, 24 տարեկան. «Ես կարծում եմ՝ ինչքան մեր ծնողները շուտ իմանան մեր մասին, այդքան ավելի լավ: Անհնար է մշտապես ապրել ստի մեջ՝ նվաստացնելով ինքդ քեզ և ծնողներիդ՝ այդպիսով նաև վիրավորելով նրանց: Երբ հասկացա, որ ուզում եմ ապրել աղջկա հետ, սկզբում ասացի մորս, իսկ հետո հորս: Նրանց համար դժվար էր ընդունել իմ դիրքորոշումը: Բայց ես վստահ էի, որ չեմ պատրաստվում զոհաբերել անձնական կյանքս, զգացմունքներս ու ցանկություններս միայն այն բանի համար, որ ծնողներս իրենց հարմարավետ զգային իմ մասին ունեցած իրենց կեղծ պատկերա-

ցումներով: Մենք միասին ապրեցինք այդ շուրջ: Հետո մենք համա-
կերպվեցինք իմ հոմոսեքսուալ լինելու փաստի հետ: Հավատացեք,
ավելի լավ է ծնողական զայրույթը կամ հակառակը՝ իրենց ըմբռ-
նումը, քան ստերով լի կյանքը: Մենք, չգիտես ինչու, կարծում ենք,
որ մեր մասին պատմելով կվիրավորենք Նրանց: Ո՛չ: Մենք նեղաց-
նում ենք Նրանց մեր ստերով: Նաև մտածեք, թե ինչ կզգաք, եթե ձեր
երեխան ձեզանից թաքցնի մի գաղտնիք, որի մասին շուրջ- բոլորը
գիտեն: Ձեզ վիրավորված ու դառնացած չե՞ք զգա, որ ձեր երեխան
վախենում է ձեզանից, չի հավատում ձեզ: Այդպես չպետք է լինի»:

ԻՆՉՈ՞Ւ ԵՎ ԱՅՂ ՄԱՍԻՆ ԱՎԵԼԻ ՇՈՒՏ ՉԵՐ ՊԱՏՄՈՒՄ ՄԵՁ

Երբ երեխաս ինձ պատմեց իր ինքնության մասին, ինձ համար
բարդ էր հասկանալ, թե ինչու է նա միայն հիմա խոսում, երբ ամիս-
ներով, եթե ոչ տարիներով, մտածել է իր զգացմունքների ու ցան-
կությունների մասին: Ես այս քայլը ընդունեցի որպես անվստա-
հության նշան և շատ ցավագին ապրումներ ունեցա, քանի որ
հասկացա, որ երկար ժամանակ տեղյակ չեմ եղել իմ երեխայի
իրական կյանքից: Ինձանից որոշ ժամանակ պահանջվեց հասկա-
նալու համար, որ դա այդպես չէ:

Այն, որ ձեր երեխան երկար ժամանակ չի կարողացել պատմել ձեզ
իր սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության
մասին, չի նշանակում, որ նա ձեզ չի վստահում: Շատ դեռահաս-
ներ հակված են մտածելու, որ իրենց մոտ «մի բան այն չէ», բայց
երկար ժամանակ չեն կարողանում բառերով արտահայտել, թե
ինչն իրենց մոտ «այն չէ»: Եվ երբ հասկանում են, թե ինչով են
տարբերվում մյուսներից, նրանց մոտ սեփական ցանկույթ-
յունների և զգացմունքների վրա վստահ լինելու անհրաժեշ-
տություն է առաջանում: Քանի որ մեր հասարակությունը կարծ-
րատիպային վերաբերմունք ունի նույնասեռական, բիսեքսուալ



և տրանսգենդեր անձանց նկատմամբ, շատերի համար իրենց «տարբեր լինելն» ատելի է դառնում: Երկար ժամանակ է պահանջվում, որպեսզի, նախ և առաջ, ընդունես ինքդ քեզ և քո ինքնությունը, այնուհետև՝ քաջություն հավաքես ու պատմես ծնողներիդ: Հիշեք, որ Հայաստանում, ցավոք, դեռևս անվտանգ չէ բացահայտ կերպով խոսել սեռականության մասին: Շատ լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանս մարդիկ վախենում են ընտանիքի անդամների, հարազատների, ընկերների կողմից սխալ ընկալվելուց կամ մերժվելուց:

Նույնիսկ եթե կասկածում եք, որ ձեր երեխան թաքցնում է իր սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը, և ցանկանում եք նրան օգնել կյանքի այդ փուլում, ապա փորձեք նրա հետ ավելի ազնիվ և բաց հարաբերություններ կառուցել: Երբ նա համոզվի, որ ընդունում և սիրում եք իրեն, անկասկած կանի այդ դժվար, բայց անհրաժեշտ քայլը:


Գևորգ, 31 տարեկան. «Երիտասարդ տարիքում մտածում էի, որ իմ դեպքում լավագույնը մայրաքաղաք գնալն է, որպեսզի ապրեի այնպես, ինչպես ցանկանում էի, որպեսզի չխանգարեի ծնողներիս այն հանգամանքով, որ ես այնպիսին չեի, ինչպիսին շատ ծնողների երեխաներն էին: Հայրս պարբերաբար կրկնում էր հետևյալ արտահայտությունը. «Ի՞նչ կմտածեն մեր մասին ուրիշները»: Ես միշտ ունեի այն զգացողությունը, որ ծնողներս գուշակում էին իմ հոմոսեքսուալ լինելու փաստը, բայց այդ մասին խոսել չէր ստացվում, քանի որ նրանք ավելի շատ անհանգստացած էին այն բանով, թե ինչ կմտածեին մեզ շրջապատող մարդիկ: Վերջերս այդ մասին պատմեցի մորս: Նրա արձագանքն ավելի դրական էր, քան ես սպասում էի: Նա ասաց, որ միշտ իմացել է, և գնահատեց այն, որ ես վերջապես սեփական կամքով պատմեցի իրեն: Հայրս ծանր տարավ այդ փաստը, քանի որ հասարակության վերաբերունքն իրեն շատ էր անհանգստացնում, չնայած ասաց, որ ամեն դեպքում սիրում է ինձ, իսկ քույրս սեռականությանս մասին գիտեր վաղուց: Հարազատներս հասկացան և ընդունեցին ինձ: Եվ դա շատ կարևոր էր»:

Գոռ, 35 տարեկան. «Վախենալու է չհասկացված և մերժված լինելը, հարազատ մարդկանց ցավ պատճառելը: Սրանք են լռելու, հաճախ նաև ստելու պատճառները: Իհարկե, ամեն մեկն ինքն է որոշում ինչպես վարվել: Որոշները համարձակվում են քամինգ աութ անել: Ամեն դեպքում, մեղքի զգացում կա, քանի որ չես արդարացրել ծնողներիդ հույսերը. այնպիսին չես, ինչպիսին նրանք կուզեին տեսնել քեզ»:

ԻՆՉՈՐՔ Ե ԻՄ ԵՐԵԽԱՆ ԱՅՍՊԻՍԻՆ

«Ինչո՞ւ է իմ երեխան այսպիսին» հարցն առաջանում է յուրաքանչյուր ծնողի մոտ: Որպես ծնող՝ մենք փորձում ենք հասկանալ պատճառները, մեղադրում ենք երեխային, ինքներս մեզ և մյուսներին: Ծնողները կարող են ինքնամեղադրական մտքեր ունենալ, օրինակ՝ «միգուցե ե՞ս եմ մեղավոր», «միգուցե լավ չե՞մ դաստիարակել»: Այնուհետև մտածում ենք նաև այլ ազդեցությունների մասին՝ քարոզչության, «վատ» շրջապատի և այլն:

Հոգեբանների կողմից պարբերաբար բազմաթիվ վարկածներ են հնչում և մերժվում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության ծագման պատճառների մասին: Ճշմարտությունն այն է, որ հիմքեր չկան կարծելու, թե երեխայի դաստիարակության առանձնահատկությունը կարող է նույնասեռական կողմնորոշման կամ տրանս գենդերային ինքնության առաջացման պատճառներից լինել: Շատ ծնողների հետաքրքրում է՝ արդյո՞ք գոյություն ունեն կենսաբանական կամ սոցիալական պատճառներ նույնասեռական, բիսեքսուալ կամ տրանսգենդեր լինելու համար: Որոշ հետազոտողներ նշում են ժառանգականության վարկածը, որոշները ուսումնասիրում են մարդու ուղեղի առանձնահատկությունները, իսկ մյուսները պատճառը փնտրում են սոցիալական միջավայրում: Նշված տեսությունների ճշգրտության վերաբերյալ դեռևս ապացույցներ չկան: Հարցականի տակ է դրվում նաև այդ տեսությունների կարևորությունը: Արդյո՞ք ձեր



երեխային սիրելը և աջակցելը կախված է նրանից, թե ինչ են ասում հետազոտողները նույնասեռական, բիսեքսուալ կամ տրանսգենդեր լինելու պատճառների մասին: Կարծում եմ, որ ոչ:

ԻՆՉՈ՞Ւ ԵՄ ԵՍ ԱՄԱՉՈՒՄ ՆՐԱՆԻԿ, ՈՐ ԻՄ ԵՐԵԽԱՆ ԼԵՍԲԻ, ԳԵՅ, ԲԻՍԵՔՍՈՒԱԼ ԿԱՄ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ Է

Բազմաթիվ գրքեր, ֆիլմեր, լրատվամիջոցներ լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանս անձանց ներկայացնում են բացասական լույսի ներքո, ինչի պատճառով մենք որոշակի կարծիք ենք կազմում այդ մարդկանց մասին և երբ նրանց համեմատում ենք մեր երեխայի հետ, անհանգստություն կամ անգամ ամոթ ենք զգում: Ի վերջո, մեր երեխայի ապագայի մասին մեր երազանքները փոխարինվել են մեզ վախեցնող պատկերներով: Առաջին հերթին մենք պետք է կոտրենք այն կարծրատիպերը, որոնք պարտադրվում են հոմոֆոբ և տրանսֆոբ հասարակության կողմից:

Երեխաս առողջ է: Նա մյուսներից տարբերվում է միայն իր սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ: Նրա առջև նույնպես կարող են բացվել հաջողության տանող ճանապարհներ: Հաջողության հասնելու համար նա ունի խելացի և ընդունող ծնողներ: Հաճախ կրկնեք այս խոսքերը, եթե դրա կարիքն ունեք:

Մեղքի զգացումը տհաճ զգացողություն է և այն հաճախ է առաջանում ծնողների մոտ: Պետք է ևս մեկ անգամ հիշել, որ ծնողներն այս հարցում մեղավորություն չունեն: Սխալ դաստիարակության պատճառով չէ, որ մեր երեխան լեսբի, գեյ, բիսեքսուալ կամ տրանսգենդեր է: Բայց ինչպե՞ս վարվել տհաճ զգացողության և ամոթի հետ: Փորձեք կենտրոնանալ ոչ թե զգացողությունների վրա, այլ այն բանի վրա, թե այս պահին ինչ է պետք ձեր երեխային:

Օգնեք նրան դառնալ երջանիկ, և տհաճ զգացողություններն ինքնուրույն կանհետանան:

ԳՈՒԿԵ ՊԵՏՔ Է ԴԻՄԵԼ ԿՈՔԵԲՈՒՅԺԻ ԿԱՄ ԿՈՔԵԲԱՆԻ՞

Ձեր երեխայի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը փոխելու համար հոգեբույժի օգնությանը դիմելը որևէ հեռանկար չունի: Նույնասեռական և բիսեքսուալ կողմնորոշում ունենալը կամ տրանսգենդեր լինելը հիվանդություն չէ, ուստի այն հնարավոր չէ բուժել: Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության բուժման փորձերը երբևէ գիտականորեն չեն հաջողել: Ոչ մի թերապիա կամ այլ բժշկական իջամտություններ չեն հանգեցրել սեռական կողմնորոշման փոփոխության, սակայն դրանց պատճառով շատ են կործանված կյանքերի և ճակատագրերի օրինակները: Եթե անգամ հիպնոսը և հոգևոր ներազդեցությունը որևէ արդյունք են տվել, դա կրել է ժամանակավոր բնույթ և պայմանավորված է եղել ճնշման և ահաբեկման արդյունքում առաջացած հոգեբանական տրավմաներով: Այժմ հոգեբույժների կողմից մարդու սեռական կողմնորոշման փոփոխությանն ուղղված յուրաքանչյուր փորձ համարվում է բարոյազուրկ, և ավելին, վնասում է մարդու հոգեկան առողջությանը:

Հոգեբանի օգնության անհրաժեշտություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ տեսնում եք, որ ձեր երեխան իրեն դժբախտ է զգում: ԼԳԲՏ մարդիկ իրենց սեռականությունն ընդունելիս հաճախ անցնում են շատ դժվարությունների միջով: Նրանց անկայուն հոգեվիճակը աստելության միջավայրի ֆոնին կարող է հանգեցնել սարսափելի հետևանքների՝ դրդելով խնդիրներն ալկոհոլով կամ թմրադեղերով փարատելուն կամ, անգամ, ինքնասպանության:

Որպես ծնող՝ դուք նույնպես կարող եք կարիք ունենալ



մասնագետի հետ խոսելու այն զգացմունքների մասին, որոնց մասին չեք կարող խոսել հարազատների հետ: Դուք կարող եք խոսել հոգեբանների հետ այն մասին, թե ինչպես երեխայի հետ շփումը դարձնել ավելի հարմարավետ երկուսիդ համար: Իհարկե, սեփական ապրումներն անձանոթին վստահելը հեշտ չէ, և միայն ձեզնից է կախված հոգեբանական խորհրդատվության դիմել -չդիմելու հարցը: Այդ քայլին դիմելու համար երբեմն ժամանակ է պետք՝ շաբաթներ, ամիսներ, տարիներ: Սակայն հոգեբանին այցելելու փաստը խոսում է ձեր կողմից արվող մեծ քայլի մասին, որն ուղղված է երեխայի հետ հարաբերությունները պահպանելուն և ամրացնելուն:

«Փինք» իրավապաշտպան ՅԿ-ի մասնագետները ԼԳԲՏ անձանց և նրանց ընտանիքի անդամներին մատուցում են հոգեբանական, սոցիալական աշխատողի, իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն: Սովորաբար, ծնողները (հատկապես՝ մայրերը), որոնք այցելում են կազմակերպության գրասենյակ, նշում են, որ մասնագետների հետ հանդիպումից հետո իրենց համար ավելի հեշտ է դառնում հասկանալ և ընդունել իրենց ԼԳԲՏ երեխաներին: Մասնագիտական աջակցությունը և սեռականության մասին ճշգրիտ ինֆորմացիան ծնողներին և ընտանիքի անդամներին օգնում է ընդունել իրենց երեխաների ինքնությունը և ազատվել ԼԳԲՏ անձանց մասին տարածված կարծրատիպերից ու նախապաշարմունքներից:

ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿԱՍԿԱՆՈՒՄ, ԹԵ ԻՆՉՈՒ ԵՆ ՄԱՐԴԻԿ Ի ԿՈՒՅԿ ԴՆՈՒՄ ԻՐԵՆԿ ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

Լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր մարդկանց հաճախ

մեղադրում են այն բանի համար, որ նրանք «ցուցադրում են» իրենց գենդերային ինքնությունը կամ սեռականությունը: Օրինակ՝ խոսում են իրենց կողմնորոշման մասին, կրում են ԼԳԲՏ խորհրդանիշներով աքսեսուարներ կամ հագուստ: Ինչո՞ւ են նրանք պիկետներ, երթեր կամ գեյ շքերթներ կազմակերպում: Ինչո՞ւ են ցանկանում ձեռք ձեռքի բռնած քայլել հանրային վայրերում: Ինչո՞ւ են հազնում հակառակ սեռի կամ գենդերի ներկայացուցիչների հագուստ: Այն հասարակությունում, որտեղ ամեն ինչ ի սկզբանե ենթադրվում և համարվում է հետերոսեքսուալ և ցիսգենդեր, դրան հակառակ գնալն ու ինքնությունը թաքցնելը դառնում է սեփական ինքնությունը ցույց տալու միջոցներից մեկը: Եվ այն ամենն, ինչ շատերը «ցուցադրություն» են համարում, իրականում ինքնագնահատականը մի փոքր բարձրացնելու և նվաստացած չզգալու միջոցներից մեկն է:

Ինչպե՞ս են ԼԳԲՏ մարդիկ այլ կերպ արտահայտվում: Ինչպե՞ս պատմել այն մասին, որ նրանք կան, և որ նրանց իրավունքները ոտնահարվում են: Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում, որպեսզի հասարակությունը դադարեցնի ձևացնել, թե իբր նրանք գոյություն չունեն: Ինչպե՞ս անել, որ մարդիկ հետաքրքրվեն սեռականության թեմաների շուրջ, տեղեկանան և հասկանան, որ ԼԳԲՏ անձինք նույնպես սովորական մարդիկ են: Ինչպե՞ս կարելի է ուշադրություն հրավիրել այս խնդիրների վրա և համեմատել նրան, որ նույնասեռական, բիսեքսուալ և տրանսգենդեր մարդիկ ունենան այն նույն իրավունքները, ինչ մյուս և բոլոր քաղաքացիները: Դժվար թե այս գրքույկն ընթերցողներից մեկին շփոթեցնի տղամարդու և կնոջ համբույրը: Ի՞նչն է ստիպում մարդկանց անհարմար զգալ, երբ աչքի առաջ համբուրվում են երկու կին կամ երկու տղամարդ: Եթե արդեն վաղուց հայտնի է, որ նույնասեռականությունը հիվանդություն չէ, ապա դրա դրսևորումը նորմալ և տրամաբանական պետք է լինի: Եթե դիտարկենք ամուսնության ինստիտուտը, ապա պարզ է դառնում, որ հակառակ սեռի մարդիկ կարող են ամուսնություն կնքել, ունենալ համատեղ սեփականություն, միասին երեխաներ դաստիարակել, իսկ դժբախտ



պատահարի դեպքում զուգընկերոջը հիվանդանոց այցելելը և նրան խնամելը նրանց դեպքում տարօրինակ չեն համարվում: Հայաստանում այդ ամենը նույնասեռ զույգերին հասանելի չէ, և նրանք չեն կարող ամուսնություն գրանցել: Իսկ ինչպե՞ս կարելի է հանրության ուշադրությունը հրավիրել այս խնդիրներին, եթե չիրականացվեն հանրային միջոցառումներ կամ շքերթներ, կամ եթե այդ մասին չբարձրաձայնվի և գիտական գրականություն չտարածվի: Ի վերջո, ոչ ոք չի մեղադրվում իր հետերոսեքսուալությունը արտահայտելու կամ ցույց տալու մեջ: Արդյո՞ք չի կարելի համարել, որ երբ հետերոսեքսուալներն ամուսնանում են և մատանի կրում, դրանով արդեն իսկ հայտարարում են իրենց հետերոսեքսուալ լինելու մասին: Ոչ ոքի մտքով չի անցնում խոսել «հետերոսեքսուալության քարոզի» մասին: Երբ հետերոսեքսուալներն իրենց ծնողներին կամ ընդհանրապես հանրությանը ներկայացնում են իրենց կնոջը, ամուսնուն, ընկերուհուն կամ ընկերոջը, ոչ ոք նրանց չի մեղադրում այդպիսով իրենց սեռական կողմնորոշումը և ցիսգենդեր լինելը արտահայտելու մեջ: Երբ ձեր զավակն ուրիշների աչքի առաջ արտահայտի իր զգացմունքները նույն սեռի զուգընկերոջ նկատմամբ, հնարավոր է, որ տհաճություն և շփոթմունք զգաք, սակայն հիշեք, որ բոլոր սիրահարված զույգերը, լինեն նրանք նույնասեռ թե տարասեռ, հաճախ չեն նկատում շրջապատի մարդկանց և տարված են միմյանցով: Երբ սիրահարված ես, մնացած ամեն բան անկարևոր է: Իսկ եթե դուք կարծում եք, որ սեռական վարքագիծը կամ գրավչությունն արտահայտելը պետք է լինի խիստ անձնական և ծածուկ, ապա այդպես պետք է համարեք բոլորի դեպքում:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԻՄ ԵՐԵՒԱՅԻՆ

Եթե անկեղծ, ապա նա հավանաբար դժվարություններ կունենա կյանքում: Այսօր շատ երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Նիդեռլանդներ և այլն) կան մի շարք օրենքներ, որոնք արգելում են սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականու-

թյունը: Մինչդեռ ավելի քան հիսուն երկրում նույնասեռ հարաբերությունները համարվում են անօրինական. ԼԳԲՏ մարդկանց զրկում են ազատությունից կամ ենթարկում մահապատժի: Հայաստանում 2003 թվականից սկսած նույնասեռ հարաբերությունները օրենքով չեն հետապնդվում: ՀՀ սահմանադրությունը արգելում է որևէ հատկանիշով պայմանավորված խտրականությունը: Թեև սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունն ուղղակիորեն նշված չեն սահմանադրության մեջ, սակայն դրանք ևս անուղղակիորեն պաշտպանված են խտրականությունից, քանի որ դրանք մարդու անձնական և սոցիալական բնույթի հատկանիշներ են:

Մեր հասարակությունում հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի լայն տարածվածության պատճառով ԼԳԲՏ անձինք հաճախ ենթարկվում են հետապնդումների և խտրականության: ԼԳԲՏ մարդկանց կյանքն ու բարեկեցությունը վտանգված կլինեն այնքան ժամանակ, քանի դեռ նրանք ճնշված են, ենթարկվում են խտրականության և բռնության: Արդարացի կլինի այնպե՛ս, որ երջանկության, սիրո և հաջողության ճանապարհը լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանս անձանց համար հաճախ լի է բազմաթիվ խոչընդոտներով: Շատ ԼԳԲՏ անձինք ստիպված են ապրել ցավի, տառապանքի, ճնշումների ներքո, բայց նրանց հաջողվում է նաև զգալ երջանկության, հաջողության, լուսավոր ապագայի ձգտման, ուրախության և սիրո բերկրանքը: Որպես ծնող՝ մենք հնարավոր է անհանգստացած լինենք մեր երեխային սպասվող ապագայով, քանի որ քաջատեղյակ ենք, թե հանրության շրջանում ինչպես են վերաբերվում ԼԳԲՏ անձանց: Գոյություն ունի լայնորեն տարածված մի կարծրատիպ, թե իբր ԼԳԲՏ անձինք չեն ձգտում երկարատև հարաբերություններ կառուցել կամ չեն կարող լիարժեք ընտանիք ստեղծել: Սակայն շատ կարևոր է հիշել, որ ԼԳԲՏ անձինք առաջին հերթին մարդիկ են, որոնք, անկախ իրենց սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից, ունենում են իրենց սիրելի մարդու հետ ապրելու և նրա հետ ընտանիք կազմելու ցանկություն: Նույնասեռ ամուսնությունների



գրանցման բացակայության, հոմոֆոբիայի, հասարակական ճնշումների ազդեցության պատճառով ԼԳԲՏ մարդկանց մեծամասնությունը կայուն հարաբերություններ կառուցելիս մի շարք խնդիրների է հանդիպում, բայց, միևնույն է, շատերն ի վերջո ձգտում են առողջ հարաբերություններ կառուցել և սիրո վրա հիմնված ընտանիք ստեղծել:

Շատ հաճախ նույնասեռ զույգերը ստիպված են լինում զգուշորեն թաքցնել իրենց հարաբերությունները՝ դրանով իսկ փորձելով պաշտպանվել հասարակությունից: Շատ դեպքերում նույնասեռական մարդկանց ո՛չ ընկերները, ո՛չ գործընկերները, ո՛չ ընտանիքն ու հարազատները տեղյակ չեն լինում նրանց հարաբերությունների և երջանիկ ընտանեկան կյանքի մասին: Իհարկե, լինում են նաև բազմաթիվ դեպքեր, երբ նույնասեռական մարդիկ ընտանիքի, եկեղեցու կամ սոցիալական այլ ազդեցության պատճառով ստիպված են լինում հետերոսեքսուալ ընտանիք ստեղծել և երեխաներ ունենալ, բայց դրանով իսկ դժբախտացնում են թե՛ իրենց և թե՛ մյուսներին:

Անշուշտ, ծածուկ կյանքով ապրելը կարող է խոչընդոտ լինել հարազատների, ընկերների և ընդհանրապես հասարակության հետ շփումներում: Հետևաբար, սա առիթ է մտածելու այն մասին, թե ինչպիսի հարաբերություններ ենք ցանկանում կառուցել և ունենալ մեզ հարազատ մարդկանց հետ: Արդյո՞ք ցանկանում ենք լինել մեկը, ում հետ ԼԳԲՏ համայնքին պատկանող հարազատները կունենան վստահության վրա հիմնված և աջակցող հարաբերություններ, թե՞ մեկը, ում օտար կհամարեն և չեն վստահի: Որպես ծնող՝ ցանկացած դեպքում պետք է պատրաստ լինենք աջակցելու մեր երեխային, երբ նա դրա կարիքն ունենա:

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՄԵԼ ԱՅՍ ՄԱՍԻՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ, ԸՆԿԵՐՆԵՐԻՆ ԵՎ ԽԱՐԵՎԱՆՆԵՐԻՆ. ԻՆՉ ԿԱՍԵՆ ՆՐԱՆՔ

Շատ ծնողներ ամբողջ ուժով փորձում են փախչել այն իրավիճակներից, որոնք պահանջում են քաջություն ցուցաբերել և պատմել սեփական երեխայի «ոչ սովորական» լինելու մասին: Սակայն այս խնդիրն ավելի է ամրապնդում մեր և մեր երեխայի միջև կապը: Ինքներս մեզ այս հարցը տալով՝ մենք զգում ենք նույն բանը, ինչ մեր երեխան՝ մեր առջև անկեղծանալուց առաջ: Ավելին, երեխան նման որոշումներ է կայացնելու տասնյակ հարյուրավոր անգամներ, և շատ անգամներ մենք ևս պետք է նույնն անենք: Գլխավոր պայմանն այն է, որ դուք ինքներդ եք որոշում, թե ում պատմեք ձեր երեխայի նույնասեռական, տարասեռական կամ տրանսգենդեր լինելու մասին: Փորձեք նաև պատկերացնել տարբեր իրավիճակներ, ինչպես, օրինակ, կպատկերացնեիք կարևոր ելույթ ունենալուց կամ աշխատանքային հարցազրույցից առաջ: Մտածեք հնարավոր հարցերի մասին և կշռադատեք ձեր պատասխանները: Ի վերջո, պարզապես մտապահեք այն խոսքերը, որոնք կցանկանայիք ասել: Հնարավոր է՝ ձեզ համար ավելի հեշտ է ասել «Իմ երեխան լեսբի, գեյ, բիսեքսուալ կամ տրանսգենդեր է» նախադասությունը, քան «Իմ զավակն այնպիսին չէ, ինչպիսին բոլորն են»: Հնարավոր է նաև հակառակը: Հայելու առաջ արտասանեք այս բառերը և դրանցում դրեք այնքան հպարտություն և սեր, որքան կարող եք: Ստացվե՞ց: Եթե ոչ, ապա փորձեք այնքան, մինչև զգաք ձեր արտասանած բառերի իրական ուժը: Եթե այդ մասին խոսելիս ձեր ձայնը դողա, և ձեր աչքերին արցունքներ հայտնվեն, ձեզ կսկսեն խղճալ, այլ ոչ թե հպարտանալ ձեր և ձեր երեխայի քաջությամբ: Ի վերջո, ձեր երեխան կարողացել է այդքան ուժ գտնել և դեմ գնալ հասարակությանը՝ սկզբում ազնվաճալով ինքն իր առաջ, իսկ հետո՝ ձեր: Մի՞թե դա հպարտանալու



բան չէ: Դա խիզախ քայլ է, և դրանով կարելի է և պետք է հպարտանալ: Այն ծնողները, որոնք դեռ կոհիվ են տալիս իրենց երեխայի լեքի, գեյ, բիսեքսուալ կամ տրանսգենդեր լինելու մասին սեփական ընկալումների հետ, շատ հաճախ մտահոգվում են շրջապատի մարդկանց արձագանքներից: Ինչպե՞ս վարվել ընտանիքի մյուս անդամների տված հարցերի հետ. «Իսկ նա ընկերուհի ունի՞», «Ե՞րբ են պատրաստվում ամուսնանալ», «Ինչո՞ւ է քո տղայի տեսքը կանացի», «Ինչո՞ւ է քո աղջիկն ավելի շատ տղամարդու պես պահում իրեն»: Նման դեպքերում իմ խորհուրդն այն է, որ, առաջին հերթին, առանց ձեր երեխայի համաձայնության՝ այդ գաղտնիքը ոչ ոքի չվստահեք: Չե՞ որ դուք քննարկելու եք նրա կյանքը, իսկ նա իրավունք ունի որոշելու, թե ով պետք է իմանա այդ գաղտնիքը, և ով՝ ոչ: Երկրորդ՝ դուք չպետք է որևէ մեկին ասեք այս գաղտնիքի մասին, քանի դեռ չեք ընդունել, որ պետք չէ ինքներդ ձեզ մեղադրել կամ որևէ կերպ արդարանալ: Ձեզ որոշակի ժամանակ է անհրաժեշտ, որպեսզի սովորեք ընդունել ձեր երեխային այնպիսին, ինչպիսին նա կա՝ միևնույն ժամանակ չունենալով բացասական զգացմունքներ: Հակառակ դեպքում դուք կտարածեք ձեր մտավախությունները և մյուսներին ցավ կպատճառեք:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ԱԶԱԿՄԵԼ ԻՄ ԵՐԵՒԱՅԻՆ

Այս գրքույկի ընթերցումը կարելի է դիտարկել որպես առաջին քայլ: Այն, որ ձեր երեխային չեք պիտակավորել, այլ փորձել և փորձում եք հասկանալ իրավիճակը, արդեն իսկ կարևոր է: Այդպիսով դուք ցույց եք տալիս նոր գիտելիքներ ստանալու ձեր պատրաստակամությունը: Ձեր երեխային սովորելու հարցում օգնելու համար դուք պետք է ուսումնասիրեք սեռականության վերաբերյալ հավաստի տեղեկություններ, կարդաք գիտական հիմք ունեցող գրականություն, որը, ի դեպ, դժվար չէ գտնել: Դուք

կկոտրեք ձեր կարծրատիպերն ու կազատվեք թշուրըմբռնումներից: Ի վերջո, դուք կունենաք գիտելիքներ, որոնք կփոխանցեք շրջապատի մարդկանց, քանի որ ժամանակն է, որ մեր հասարակությունը փոխի իր հայացքները: Ունենալով համապատասխան գիտելիքներ՝ դուք կկարողանաք կանխել այն դժվարությունները, որոնք հետապնդում են ձեր երեխային:

Գիտելիքն առաջին քայլն է, որով կարող եք օգնել ձեր երեխային՝ կյանքի այս դժվարին ճանապարհին նրա կողքին լինելով: Մնացածը դատարկ բան է: Պետք է պարզապես սիրեք ձեր երեխային: Սերը նշանակում է ըմբռնում, ընդունում և փոխադարձ պատասխանատվություն: Առաջին քայլն արդեն արել եք: Ձեր սիրտն ու ծնողական բնագոյը ձեզ կհուշեն, թե ինչ կլինի հետո: Չէ՞ որ դուք մյուսներից լավ գիտեք ձեր երեխային: Հնարավոր է՝ ձեր երեխային պարզապես պետք է խոսել իր զգացմունքների մասին: Հնարավոր է, որ այս գրույցն օգտակար լինի այն պահերին, երբ նա վատ իրավիճակներում հայտնվի: Անհրաժեշտ է նրան պատմել այն մասին, թե ինչպես եք դուք դուրս գալիս նման իրավիճակներից: Ամեն դեպքում, այդ շրջանը շատ հետաքրքիր կարող է լինել ձեր երկուսի համար: Դուք կզգաք, որ ձեր առաջ բացվում է մի ամբողջ աշխարհ, որի մասին անգամ չգիտեիք: Սկզբում կբացահայտեք նրա՝ ձեզ համար նոր և ոչ սովորական հատկանիշները: Հետո աստիճանաբար նրա կյանքի մի մասը կկազմեք և կճանաչեք նրա ընկերներին: Դուք կհասկանաք, որ ԼԳԲՏ մարդիկ իրականում չեն տարբերվում մյուսներից, և, ամենակարևորը, մտերմիկ ու վստահելի հարաբերություններ կստեղծեք ձեր երեխայի հետ:



ԿԵՐԶԱՐԱՆ

Հուսով եմ՝ այս գրքույկն օգնեց ձեզ գտնել ձեր բազմաթիվ հարցերի պատասխանները: Որպես ծնող՝ մենք նույնպես աջակցության, հարգանքի, վստահության և, իհարկե, մեր երեխաների կողմից սիրո կարիք ունենք: Յուրաքանչյուր ծնող պետք է նաև ինքն իր նկատմամբ ուշադիր լինի, հաշվի առնի սեփական ապրումներն ու զգացմունքները: Կարևոր է, որ երեխաները մեզանից իմանան այն ապրումների մասին, որոնք կապված են իրենց քամինգ աուֆի կամ դրա հետ կապված այլ իրադարձությունների հետ:

Նաև հիշեք, որ միշտ կարող եք մասնագիտական աջակցություն ստանալ Փինք Արմենիայում, որտեղ աշխատում են հոգեբաններ և սոցիալական աշխատողներ: Մասնագետների հետ կարող եք քննարկել այնպիսի հարցեր, որոնց մասին ինչ-որ պատճառներով չեք կարող խոսել ձեր երեխայի, ընկերների կամ մեկ այլ անձի հետ:



ԻԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ԻԱՍԿԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՅԿ - հապավում՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն:

Բիսեքսուալ (երկսեռական) - անհատ, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի սեռերի/գենդերների նկատմամբ:

Գեյ (նույնասեռական տղամարդ) - անհատ, որ խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունների ցանկություն ունի նույն գենդերի անձի հետ:

Գենդեր - վերաբերում է մարդկանց՝ առնականության և կանացիության ներքին ընկալմանը և փորձին, նաև հասարակական կառուցվածքին, որտեղ սահմանվում են որոշակի վարքագծեր տղամարդկանց և կանանց դերերի համար՝ կախված պատմությունից, հասարակությունից, մշակույթից և դասակարգերից: Գենդերը կապված է հասարակության ակնկալիքների հետ և կենսաբանական հարց չէ:

Գենդերային արտահայտում - անձի՝ իր իսկ (կամ այլոց կողմից ընկալվող) գենդերային ինքնության դրսևորումը: Մարդիկ սովորաբար աշխատում են համապատասխանեցնել իրենց գենդերային արտահայտումն իրենց գենդերային ինքնությանը՝ անկախ ծննդյան պահին հաստատված սեռից:

Գենդերային ինքնություն - անհատի՝ իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ հաստատված սեռին: Այն սոցիալական ինքնության կատեգորիա է և վերաբերում է անհատի նույնականացմանը որպես տղամարդ, կին կամ այլ գենդեր:



ԼԳՔՏ - հապավում լեքի (սույնաստռական կին), գեյ (սույնաստռական տղամարդ), բիսեքսուալ (երկստռական), տրանսգենդեր անձանց համար:

ԼԳՔՏ-դրական աջակցություն - ենթադրում է մասնագիտական ինսաֆ, որը հարգալից, իրազեկ և հավասարապես աջակցող է ԼԳՔՏ անձանց ինքնությունների, կենսափորձերի և մտահոգությունների նկատմամբ:

ԼԳՔՏ համայնք - լեքի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր անձանց համայնք, որը միավորված է ընդհանուր հետաքրքրություններով, ինդիվիդուալ և նպատակներով: Այն միատարր չէ և իր հերթին բաղկացած է տարբեր ենթահամայնքներից, խմբերից ու հանրույթներից:

Լեքի (սույնաստռական կին) - անհատ, որ խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունների ցանկություն ունի նույն գենդերի անձի հետ:

Խտրականություն - անհավասար կամ անարդար վերաբերմունք, որը կարող է պայմանավորված լինել տարբեր հիմքերով, օրինակ՝ տարիքով, էթնիկ ծագմամբ, հաշմանդամություն ունենալով, սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ:

Յետերոնորմատիվություն - հղում այնպիսի մշակութային և սոցիալական պրակտիկաների, որտեղ տղամարդիկ և կանայք առաջնորդվում են հավատով և վարքով, որ հետերոսեքսուալությունը միակ ըմբռնելի սեռականությունն է: Այն նաև ենթադրում է հետերոսեքսուալության դիրքավորումն իբրև «նորմալ» լինելու միակ ձև:

Յետերոսեքսուալ (տարասեռական) - անհատ, որ խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների

ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունների ցանկություն ունի այլ գեղերի անձանց հետ:

Յոմոֆոբիա - վախ, անհիմն զայրույթ, անհանդուրժողականություն և/կամ ատելություն նույնասեռականության նկատմամբ:

Նույնասեռական/հոմոսեքսուալ (լեսբի կամ գեյ) - անհատ, որ խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունների ցանկություն ունի նույն գեղերի անձանց հետ:

Սեռ - անհատի կենսաբանական ստատուս՝ որպես արական, իգական կամ ինտերսեքս: Որոշվում է այնպիսի չափորոշիչներով, ինչպիսիք են սեռական քրոմոսոմները, գոնադները, արտաքին ու ներքին սեռական օրգանները:

Սեռական կողմնորոշում - անհատի խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունների ցանկությունն այլ անհատի հետ:

Սեռական վարքագիծ - սեռական բնույթի գործողություններ, սեռական կենսակերպ՝ արական, իգական կամ այլ սեռի անձի, ինչպես նաև սեփական մարմնի հետ (ձեռնաշարժություն):

Սեռականություն - անձի կենսաբանական և սոցիալ-հոգեբանական բնութագրիչների ամբողջություն, որը սահմանում է մարդու ինքնությունը, վարքագիծը, կերպարն ու դերը որպես անհատ և որպես հասարակության անդամ:

Ցիսգեղեր - անհատ, որի գեղերային ինքնությունն ու ու գեղերային արտահայտումը համապատասխանում են ծննդյան պահին հաստատված սեռին և իր գեղերի հետ կապված սոցիալական սպասելիքներին:



Տրանսգենդեր կամ տրանս - հովանի եզրույթ է, որը ներառական է մի շարք ոչ նորմատիվ գենդերային ինքնությունների և արտահայտումների համար: Օգտագործվում է որպես ածական և վերաբերում այն մարդկանց, որոնց գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը տարբերվում է ծննդյան պահին հաստատված սեռից, և ներառում է տրանսսեքսուալ անցյալով կանանց և տղամարդկանց, տրանսսեքսուալ նույնականացող անձանց, տրանսգենդեր անձանց, հագուստափոխ անձանց և այլն:

Տրանսգենդեր - օգտագործվում է որպես ածական և վերաբերում է այն անհատին, որի գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը տարբերվում է ծննդյան պահին հաստատված սեռից, ընդ որում՝ բժշկական միջամտության ենթարկվելը պարտադիր պայման չէ:

Տրանսսեքսուալ - այժմ քիչ օգտագործվող և ոչ հովանի եզրույթ է. օգտագործվում է որպես ածական և վերաբերում այն անհատին, որն իրեն լիովին նույնականացնում է հաստատված սեռին հակառակ գենդերային դերի հետ և մշտապես ցանկանում է ապրել նախընտրած գենդերային դերով: Այն հաճախ ուղեկցվում է սեփական առաջնային և երկրորդային սեռային հատկանիշների ուժեղ մերժմամբ և նախընտրած գենդերին բնորոշ մարմնին համապատասխանեցման ցանկությամբ: Տրանսսեքսուալ անհատը ցանկանում է իրականացնել կամ իրականացնում է սեփական գենդերի փոփոխություն՝ արականից իգական կամ իգականից արական, որը շատ դեպքերում ներառում է նաև մարմնի հետ կապված փոփոխություն՝ հակառակ սեռի հորմոնային թերապիա և սեռական օրգանների վիրահատություն (տե՛ս «գենդերի վերահաստատման վիրահատություն»):

Տրանսվեստիտ/հագուստափոխ (cross-dresser) - անհատ, որը սիրում է որոշ ժամանակ հագնել այլ գենդերին վերագրվող հագուստ: Նրա նույնականացումն այլ գենդերի հետ կարող է լինել

շատ ուժեղ կամ համեմատաբար թույլ: Տրանսվեստիտ կարող են լինել ցանկացած գենդերային ինքնություն ունեցող անձինք, որոնց կյանքի էական մասն է կազմում այլ գենդերի հագուստ կրելը. դա հոգեհուզական մակարդակում նրանց անձի դրսևորումներից է: Պարտադիր չէ, որ այն լինի սեփական գենդերային ինքնության առումով անհարմարության հետևանք. որոշ մշակույթներում դա կարող է լինել մշակութային կամ կրոնական ավանդույթներով պայմանավորված վարքի դրսևորում: Տրանսվեստիտ եզրույթը դուրս է գալիս մասնագիտական կիրառության շրջանակներից, փոխարենն օգտագործվում է հագուստափոխ (cross-dresser) եզրույթը, որն արտահայտում է նույնանման բովանդակություն:

Տրանսֆոբիա - բացասական մշակութային և անձնական համոզմունքներ, կարծիքներ, վերաբերմունք և վարքագիծ, որոնք հիմնված են տրանս անձանց կամ գենդերային ինքնության և գենդերային արտահայտման վարիացիաների հանդեպ նախապաշարումների, զգվանքի, վախի և/կամ ատելության վրա:

ԻՂՈՒՄՆԵՐ

1- Jack Drescher, Carol North. "Out of DSM: Depathologizing Homosexuality".

<https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC4695779/>. 2015.

2- Richard D. Lyons Special to The New York Times. "Psychiatrists, in a Shift, Declare Homosexuality No Mental Illness".

<https://www.nytimes.com/1973/12/16/archives/psychiatrists-in-a-shift-declare-homosexuality-no-mental-illness.html>. 1973.

World Health Organization. The ICD-10 Classification of Mental and Behavioural Disorders.

<https://apps.who.int/iris/handle/10665/37958>.

3 - American Psychological Association. "Answers to Your Questions For a Better Understanding of Sexual Orientation & Homosexuality".

<https://www.apa.org/topics/lgbtq/orientation.pdf>. Retrieved January 16th, 2022.

4 - Gabriel A. Orenstein; Lindsay Lewis. "Eriksons Stages of Psychosocial Development".

<https://www.ncbi.nlm.nih.gov/books/NBK556096/>. 2022.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	1
Ի՞նչ է ՍԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ Ի՞նչ ԿԱՊ ՈՒՆԻ ՄԵՉ ՀԵՏ.....	3
ՈՎԷԹՐ ԵՆ ԼԵՍԲԻ, ԳԵՅ ԵՎ ԲԻՍԵՔՍՈՒԿԱԼ ՄԱՐԴԻԿ	4
Ի՞նչ է ԱՍՈՒՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՒՅՆԱՍԵՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՍԵՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	9
ՈՐՈ՞ՆԸ ԵՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՈՐ ԱԶԴՈՒՄ ԵՆ ՄԱՐԴՈՒ ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՎՐԱ.....	11
ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԻՆԸ. ՈՎԷԹՐ ԵՆ ՆՐԱՆԸ	13
ՆՈՒՅՆԱՍԵՌԱԿԱՆ, ԵՐԿՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՆՍ ՄԱՐԴԻԿ ԱՄԵՆՈՒՐ ԵՆ.....	16
ԱԶՆՎԱՑՈՒՄ (ԶԱՄԻՆԳ ԱՈՒԹ).....	18
Ի՞նչ է ԶԱՄԻՆԳ ԱՈՒԹԸ (ԱԶՆՎԱՑՈՒՄ).....	19
Ի՞նչ ԶԳԱՅԻ ԵՄ, ԵՐԲ ԵՐԵԽԱՍ ԻՆՁ ՊԱՏՄԵՑ ԻՐ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....	23
ՄԵՂԶԻ ԶԳԱՅՄԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄ.....	26
ԻՄ ԵՐԵԽԱՆ ՓՈԽՎԵ՞Լ Է.....	28
ԻՆՉՈ՞Ւ ԵՎ ՊԱՏՄԵՑ ՄԵՉ ԱՅԴ ՄԱՍԻՆ.....	29
ԻՆՉՈ՞Ւ ԵՎ ԱՅԴ ՄԱՍԻՆ ԱՎԵԼԻ ՇՈՒՏ ՉԷՐ ՊԱՏՄՈՒՄ ՄԵՉ.....	31
ԻՆՉՈ՞Ւ Է ԻՄ ԵՐԵԽԱՆ ԱՅՄՊԻՍԻՆ.....	33
ԻՆՉՈ՞Ւ ԵՄ ԵՄ ԱՄԱԶՈՒՄ ՆՐԱՆԻՑ, ՈՐ ԻՄ ԵՐԵԽԱՆ ԼԵՍԲԻ, ԳԵՅ, ԲԻՍԵՔՍՈՒԿԱԼ ԿԱՄ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ Է.....	34
ԳՈՒՑԵ ՊԵՏՔ Է ԴԻՄԵԼ ՀՈԳԵԲՈՒՅԺԻ ԿԱՄ ՀՈԳԵԲԱՆԻ՞.....	35
ՄԵՆԸ ՉԵՆԸ ՀԱՍԿԱՆՈՒՄ, ԹԵ ԻՆՉՈՒ ԵՆ ՄԱՐԴԻԿ Ի ՑՈՒՅՑ ԴՆՈՒՄ ԻՐԵՆՑ ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ.....	36
Ի՞նչ է ՍՊԱՍԿՈՒՄ ԻՄ ԵՐԵԽԱՅԻՆ.....	38
ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՏՄԵԼ ԱՅՍ ՄԱՍԻՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ, ԸՆԿԵՐՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻՆ. Ի՞նչ ԿԱՍԵՆ ՆՐԱՆԸ.....	41
ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ԱՋԱԿՑԵԼ ԻՄ ԵՐԵԽԱՅԻՆ.....	42
ՎԵՐՋԱԲԱՆ.....	44
ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	45
ՀՂՈՒՄՆԵՐ.....	50



SIGRID RAUSING TRUST

Այս ձեռնարկը պատրաստվել է Փինք իրավապաշտպան 34-ի կողմից՝ Սիգրիդ Ռաուզինգ Թրասթի աջակցությամբ, իսկ ձևավորումը և տպագրությունն իրականացվել է Շվեդիայի ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատու է կազմակերպությունը, և այն պարտադիր չէ, որ արտահայտի Սիգրիդ Ռաուզինգ Թրասթի և Շվեդիայի կառավարության տեսակետները:



www.pinkarmenia.org



060 377277



info@pinkarmenia.org